

ԼՈՒԻԶԱ ԲԱԲԱՅԱՆ

ՄԻՐՈ ՀԱՅՐԵՆԻՔ

ԵՐԵՎԱՆ

ՀԵՂԻՆԱԿԱՎԻՒՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

2022

*Նվիրում եմ բոլոր ժամանակների հայ
զինվորներին*

*Հրատարակությունը հովանավորվել է
Նորիկ Նիազյանի կողմից*

Բարայան Լուիզա

Միրո հայրենիք/ Լ. Բարայան.- Եր.: «Տիր» հրատ.,
2022.- 124 էջ:

Լուիզա Բաբայան

Հայուիին կիսվում է իր սիրաշատ
զգացմունքներով, որոնք տածում է Հայաստանի
հանդեպ և խոսում իր երազած հայրենիքի
մասին: Մեր սուրբ հողի սահմանը սկսվում է
հայ զինվորով, սրբացվում նրա անմեղ արյամբ
և ավարտվում նրա քաջազործություններով:
Նա վստահ է, որ սերը կարող է հանդիսանալ
շարժիչ ուժ՝ երկիրը ավելի զորեղ ու հաղթական
դարձնելու համար:



101 տարի անց . . .

2016 թվական, ապրիլ . . .

Թշնամու զորքերը անցել էին հարձակման և շարժվում էին հենակետ 116-ի ուղղությամբ: Հայ զինվորները, չնայած այն բանի, որ գործ ունեին հակառակորդի մեծաքանակ զորքի հետ, կարողանում էին զգալի վնասներ հասցնել ազերիներին: Շարքային Քյարամ Ալոյանը և կապիտան Արմենակ Ոհրֆանյանը կովում էին նույն խրամաբջից: Նրանց կողքի խրամաբջջում Ռոբերտ Արացյանն էր, իսկ նրա կողքին՝ Անդրանիկն ու Մուշեղը: Տղաներն ակտիվ կրակ էին վարում հակառակորդի ուղղությամբ:

-Տղե՛րք ջան, դիմացե՛ք. շուտով մերոնք կհասնեն: Ոչ ոք չհամարձակվի զոհվել,- կարգադրեց կապիտանը:

Հանկարծ թշնամու տանկերից մեկը հայտնվում է խրամատ 116-ում:

-Տղե՛րք, հե՛տ գնացեք ու այնպես դիրքավորվեք, որ տանկի նշանառության տակ չհայտնվեք,-ասում է Արմենակը, իսկ ինքը վազում է դեպի թշնամու տանկն ու նոնակով պայթեցնում այն:

Սիրո Հայունիք

Երբ վերադառնում է խրամաբջիջ, Ալոյանը
զեկուցում է.

-Կապիտան, մի քանի մետր հեռավորության վրա ևս
մի տանկ կա:

-Մենք այստեղ դիմադրում ենք,- գոչեց Արաջյանը:

Այդ պահին թշնամու տանկերից մեկի արկը ընկավ
Քյարամի և Արմենակի խրամաբջջի վրա:

-Ազերի՛ շներ,- կատաղած բողավեցին տղերքն ու
ավելի ուժգին հարվածներ սկսեցին հասցնել
թշնամուն:

-Տղե՛րք, ինչով ուզում են թող գան, դրանցից ոչ ոք
չի անցնելու ու չի վերցնելու մեր դիրքը,- գոռում է
Արաջյանը:

Ասրարո թշնամին չի դադարեցնում կրակոցները, և
արձակված գնդակներից մեկը խոցում է Ասդրանիկի
կրծքավանդակը, ու նա վիրավորված ընկնում է:

-Ասդո՛,- Արաջյանը վազում է ընկերոջ մոտ,
բարձրացնում նրան և միասին հետ են գնում:
Դիրքավորվելով հերթափոխի դիտակետում՝
Արաջյանը կապ է հաստատում գնդի հրամանատարի
հետ.

Լոփա Բաբայան

-Մենք վիրավորներ ունենք, կապիտանն ու Քյարամը զոհվել են, փամփուշտները շուտով կվերջանան, մեզ շտապ օգնություն է պետք:

-Ո՞րե՛ս, նահանջեք, թե չէ կզոհվեք:

-Չենք նահանջելու, սպասելու ենք մինչև օգնական ուժերը հասնեն ու կովելու ենք մինչև վերջ:

Անդրանիկն արնաքամ էր լինում:

-Դիմացի՛, Ասդ, մի քիչ էլ դիմացի, ցավդ տանեմ:

Անդրանիկի աչքերը փակվեցին, Ո՞րերտը զգաց, թե ինչպես ընկերոց հոգին ու մարմինը զատվեցին իրարից:

-Ախապե՛ս,- ցածրաձայն գոռում էր Ո՞րերտը:

Պայքարը դեռ չէր ավարտվել, ուստի պետք է զգոն լինեին: Տղերքը շարունակում էին կովել, բայց Աքաջանք վիրավորվեց, իսկ փամփուշտները շատ քիչ էին մնացել:

-Տղե՛ք, արագ գնացեք փամփուշտներ բերելու, շու՛տ արեք, մեռնեմ ձեզ: Մարտական խորշում դիրքավորվելով՝ Ո՞րերտը շարունակում է կովել: Մինչ տղաները կգային, փամփուշտները սպառվեցին, և թշնամուն հաջողվեց ներխուժել խրամատ: Նկատելով իրեն մոտեցող թշնամուն՝

Սիրո Հայրենիք

Աբաջյանը վերջին անգամ կապ է հաստատում
հրամանատարության հետ.

-Պարո՞ն գնդապետ, պարո՞ն գնդապետ:

-Ասա՛, տղե՛ս:

-Պարո՞ն գնդապետ, խնդրում եմ, որ բոլորին
փոխանցես:

-Երկու րոպեից հասնում ենք, ասա՛:

-Էս դիրքում իմ տղերքի արյունն ա թափվել:

-Ասա՛, լսում եմ, ձայնդ կտրտվում է:

-Էս հողի վրա պայքար ա էղել, ստեղ իմ ախազերներն
են կռվել,- տեսնելով մոտեցող ազերիներին՝
Աբաջյանը նոնակը թաքցնում է ափի մեջ և սպասում,
որ ավելի մոտենան:

-Խոսա՛, մի՛ անջատիր:

-Ես էլ հիմա կալցոն քաշում եմ ու ուզում եմ, որ
բոլորին փոխանցես, որ էս դիրքը հանձնողի . . .

Նոնակի ձգանը քաշելով՝ Աբաջյանը պայթեցրեց
իրեն թշնամու մի քանի զինվորների հետ միասին:
Այդ ընթացքում վրա հասան հայկական ուժերն ու
սկսեցին հրետանակոծել թշնամուն:

Լովիզա Բաբայան

-Սատկացրե՞ք դրանց, չթողնեք, որ փախչեն:

Լուսաբացին թշնամին արդեն ոչնչացված էր:
Խրամատներից դուրս էին բերում տղաների
անշնչացած մարմինները: Այն տղաների, ովքեր
քաջարար նայեցին մահվան աչքերին և հեգնեցին
նրա «ամենակալությանը»:

«Չգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝
անմահություն»

Եղիշե, 5-րդ դարի պատմիչ

101 տարի անց հողը շարունակում էր լիանալ
արյամբ, հայի արյամբ, բայց ոչ այն մեկի, ում
ցանկանում էին թռողնել թանգարանում: Այժմ՝ 101
տարի անց, մենք այն հայերն ենք, որ երբեք չեն
մոռանալու իրենց հայի անունը, հայ լինելն ու չեն
զիջելու իրենց գոյությունը... .

Հայրենի կտավ

Ապրիլյան պատերազմ . . .

Գիշեր էր, մութ ու սոսկալի գիշեր: Ես ութ
տարեկան էի, անկողնուս մեջ պառկած ու տիկնիկիս
ամուր գրկած աղործում էի. «Աստված պապիկ,
այնպես արա, որ իմ զինվորները սոված չմնան,
տաքացրո՛ նրանց, որ հանկարծ չմրսեն,
պաշտպանի՛ նրանց, խնդրո՛ մ եմ»:

Ասգիր եմ հիշում խոսքերս, որոնք վեց տարի առաջ
էի արտաքերել, բայց թե ով էր օգնել ինձ հասկանալ
պատերազմի լրջությունն ու արմատավորել իմ մեջ
հավատքն առ Աստված հստակորեն ի մի բերել չեմ
կարողանում: Ու ամեննեին էլ կարևոր չէ, թե
ծնողներիցս ում դերն է մեծ եղել այդ հարցում,
որովհետև ես ծնվել էի հայրենասեր հայերի
ընտանիքում: Ես մեծացել էի հայկական
երաժշտության ներքո, որոնք տատիկս էր երգում ինձ
ընեցնելիս, սննդակարգս կազմված էր միայն
հայկական ուտեստներից, որոնք մայրս սիրով էր
պատրաստում ինձ համար, պապիկս ինձ Հայկ
Նահապետի, Սասունցի Դավթի, Տիգրան Մեծի
մասին էր պատմում, իսկ հայրս ու հորեղբայրս
տանում էին Հայաստանի տեսարժան, ինչպես նաև
անտեսված վայրեր և ամեն անգամ կրկնում. «Սա

Հովհան Բաբայան

Հայաստանն է, և դու հայ ես»: Ու թեև անունս
Փրանսիական է, իսկ ազգանունս հայկական ծագում
չունի, բայց վերջանում է յան-ով, և ես հայ եմ:
Խոսում եմ հայերեն և պաշտում եմ հայոց լեզուն,
քանզի այն իմ սրտի լեզուն է, և ես վստահ եմ, եթե
սիրտս խոսել կարողանար, այն հայերեն կխոսեր:

Ես ապրում եմ քաղաքամայր Երևանում և պետք է
խոստովանեմ, որ այն նմանը չունեցող քաղաք է:
Տեսարանը, որ բացվում է բարձրահարկ շենքի վերին
հարկերից ուղղակի ապշեցնող է: Դու կարող ես
հիանալ բնության աներևույթ ուժով և հպարտանալ
գեղեցիկը վայլելու քո եզակի հնարավորությամբ:
Այդ տեսարանն օրվա ցանկացած պահի, լինի այդ քեզ
մայրամուտ, քեզ չի ձանձրացնի: Այսպիսի
տպավորությունն է, ասես մի տաղանդավոր նկարիչ
շարունակ նույն կտավն է նկարում՝ փոխելով միայն
գունային գամմաները, և դա անում է այնքան
մանրակրկիտ, որ համահոնչ լինեն սրտիդ խոհերն
ու եղանակը: Այդ կտավներն իմ հոգու ներկապնակի
գույներով են ներկված, որովհետև ինձ սիրելի է ու
հարազատ ամեն մի երանգ: Դժվար է դիմադրել այս
խենթությանը, այն շա՞տ դյուրիչ է:

Երևանը բազմաֆունկցիոնալ է և նրա
յուրահատկություններից մեկն այն է, որ ունենալով
հազարամյակների պատմություն, կարողացել է

համադրել հնի և նորի սքանչելիության
չափանիշները։ Անսահման են տոռերը, որոնցով
կարող եմ պատմել Երևանի կատարելության մասին,
քանզի խնդրում եմ ինքներդ խորհեք Երևանի ու
նրա արժեքների մասին, որոնք շատ հաճախ
չնկատելու եք տվել ու շրջանցել։

Չսայած որ ծնվել էի և ապրում էի Երևանում,
արմատներս ինձ հաճախ իջևան էին ուղղորդում։
Այնտեղ, ուր օդի թարմությունը կարող է շնչահեղձ
անել, իսկ բնության զարմանագործ բնույթը՝
խելահան։ Հիշում եմ՝ ընկերներով առավոտից մինչ
զիշեր խաղում էինք աղբյուրի կողքին, հաճախ
հարևան տան բակից մրգեր էինք գողանում, իսկ
որպես արդարացում որդեգրել էինք հետևյալ
կարգախոսը. «Մրգի գողը գող չէ»։

Մեր խաղին ու չարաճճիություններին միշտ
ականատես էին փառապանծ լեռները, որոնք կարծես
մեր հետ խաղալ էին ուզում, բայց ցավոք սրտի
նրանց տրված չէր այդ հնարավորությունը։ Գեղեցիկ
էին լեռները, խորհրդավոր, բայց երբևէ չէի մտածել,
որ այդ լեռներից այն կողմ մեր դարավոր թշնամին է
ապրում։ Ամեն անգամ, երբ թշնամու անուն էին
տալիս, աչքերիս առաջ մի խորթ աշխարհ էր
ստեղծվում, ուր մարդիկ չարության արգասիքներ
էին արտաշնչում։ Ես միշտ խուսափում էի «թշնամի»,

Հովհան Բաբայան

«պատերազմ» բառերի վերծանումից, ուստի անհոգ էի և երջանիկ:

Սիրում էի դուրս գալ պատշգամբ, նայել լուսնին ու խոսել՝ դարձնելով նրան իմ փիլիսոփայական մենախոսության ունկնդիրը, ու մի պահ դող կանցներ մարմնովս, ես կնայեի աստղերին, մի քանիսը հաշվելով, կժպտայի, մինչ գլուխս կպտտվեր դրանց բազմությունից ու կվերադառնայի ննջասենյակ:

Տատիկս սովորականի նման քնած չէր լինի, ես սուրճ կպատրաստեի ու միասին կզրուցեինք: Ամենից շատ սիրում էր ինձ պատմել իր ծնողների մասին, ովքեր մասնակցել էին համաշխարհային 2-րդ պատերազմին և հենց այդ ժամանակ էլ ծանոթացել են և ամուսնացել: Մեծ պապս եղել է հայ կամավորականների շարքում, իսկ մեծ տատս ոռու էր և կրվում էր հօգուտ Ռուսաստանի, նա զարմանալիորեն շատ ուշ է իմացել պապիկիս հայ լինելու մասին: Նրանց առաջնեկը ծնվել է գնացքում, ով հետագայում կունենար 11 քոյր և եղբայր, որոնցից մեկը տատիկս է: Իմ հիասքանչ տատիկի մեջ կարծես թե դոմինանտ է ոռոսական գենը, քանի որ հաճախ ինձ ասում է, որ ամուսնանամ ոռու տղայի հետ ու ապրեմ երանազեղ: Շիշտ է՝ ես խելագարվում եմ տատիկիս համար, բայց ինչպես

Սիրո Հայրենիք

հարիր է յուրաքանչյուր հայ աղջկա, ես ընտրելու եմ
դժվարությունների ուղին . . .

Բախտի բերմամբ հաճախ եմ եղել Գյումրիում:
Գյումրին կարծես մի ուրիշ աշխարհ է, քաղաք, որ
օրինել է Աստված փառահեղությամբ: Գյումրվա
սիրուն բարբառը, հյուրընկալ մարդիկ, թովիչ
պատկերը, հեքիաթային բնույթ ունեն: Ծիծաղի, սիրո
քաղաք է Գյումրին, ցավ տեսած քաղաք է Գյումրին:
1988 թվականին տեղի ունեցած Սպիտակի
երկրաշարժի հետևանքով մեծ ավերածություններ
եղան, հազարավոր խոսքեր մնացին չասված,
գաղափարները՝ ի կատար չածված: Շատ
երեխաններ մնացին որբուկ, շատերն էլ գնացին
դեպի երկնային արքայություն:

Շատ ցավալի է, որ բնական աղետներից այդքան
մարդիկ են մահանում, ու բոլորս անզոր ենք դրանք
կանխելու, բայց ավելի ցավոտ է, երբ աղետները
մարդիկ են ստեղծում ու միտք էլ չունեն դրանց վերջ
տալու:

Լինել Գյումրիում ու չայցելել Սուրբ Ամենափրկիչ
եկեղեցի, ուղղակի անկարելի էր: Երկրաշարժից
հետո եկեղեցին մասսամբ ավիրվել էր, և այն երկար
ժամանակ վերականգնել չէին թողնում, որպեսզի

Լովիզա Բաբայան

Վերածեն երկրաշարժի հուշարձանի: Եկեղեցու հետնամասում՝ Շահումյան եկեղեցու շենքի բակում, գտնվում է Խաչքարերի պուրակը՝ բաղկացած 20 խաչքարերից:

Եկեղեցու բակում մի հուշարձանի մոտեցած:
Վերջինս, ինձ ասացին, որ այն նվիրված է
երկրաշարժի անմեղ զոհերին և հուշարձանի վրա մի գրություն ցույց տվեցին. «Անմեղ զոհերին,
բարեգութ սրտերին»:

Մի պահ մտածեցի. «Ինչ լավ ժամանակներում եմ ապրում. Ո՞չ երկրաշարժ կա, ո՞չ էլ՝ այլ աղետ», բայց հետո բախտս պիտի նախանձեր . . .

Անկատար իդձեր

Մենք սովորություն ունենք կապել մեզ ու մեր պատկերացումները ապագայի հետ: Երբեմն այնքան ենք տարվում այդ պատկերացումներով ու սավառնում երևակայության աշխարհում, որ կյանքի ապտակները զգալուց հետո կորցնում ենք ամեն բանի իմաստն ու ապրում ենք միապաղադ, իրոք որ անհմաստ: Ծիշտ է, ուղեղը կարողանում է դուրս գալով իրականության սահմաններից ստեղծել երևակայական աշխարհ, քանզի երբեմն այդ աշխարհում մեզ անհասանելի իրականությունն է:

Գիտեք, երազել պետք է, նույնիսկ պարտադիր է, սակայն երազեք այնքան, որ ժամանակ մնա գործելու և այդ երազանքներն ի կատար ածելու: Անհնարին թվացող երազանքները պարզապես հստակ չորոշվածներն են, ուստի հատակեցրեք ձեր երազանքները ու ձեր առաջ կհայտնվեն դրանց հասնելու ամենատարբեր եղանակները: Պարզապես ձգտում է պետք ու պայքար, սեր ու հավատ, բայց բավ է հանդիպենք ցավի ու դավի, պարտության ու դժվարության և կթողնենք, որ մեր երազանքները հօդս ցնդնեն, ասես երբսէ չեն էլ եղել, մինչդեռ պետք է գիտակցել, որ պարտվողի կարգավիճակով ապրելը ամենսին էլ այն շահեկան տարբերակը չէ, որ կարող ենք ընտրել: Անդադար պայքարողը ուշ թե

Լուիզա Բաբայան

շուտ հասնելու է իր երազանքին, իսկ առաջին հարվածից ընկնողն ու վեր բարձրանալ չփորձողը զրկված է այդ անձեռնամխելիությունից:

Առաջ ես Էլ շատ երազանքներ ունեի, հիմա Էլ ունեմ, բայց եկավ մի ժամանակ, որ առերեսվեցի իրականության դառնագին շղթայի, որն արմատախիլ արեց երթեմսի երազանքներս և սերմանեց նորերը:

Այդ օրը ես արթնացա ոչ թե եղբորս ծայնից, որ կշնչար. «Լուիզա», արի խաղանք», այլ՝ կրակոցների: Օրը՝ 16.07.2020թ., ես՝ Տավուշի սահմանամերձ գյուղերց մեկում: Առաջին անգամ էր նման բան պատահում, ավելի ճիշտ առաջին անգամ էի գրեթե լիովին հասկանում, թե ինչ է կատարվում:

Մարմնովս դող էր անցնում, լաց լինելու անհագ ցանկություն ունեի, բայց լաց լինելը նվազագույնը անմտություն կլիներ: Մի զգացողություն էր առաջանում, որ ամբողջ մարմինս անասելի էներգիայով էր լցնում և քանի որ ոչինչ անել չէի կարողանում, սպանվում էր գիտակցությունս: Ժամ առ ժամ սիրտս քայրայվում էր անարդարության ու ատելության ատոմներով: Բայց րոպեյի մեջ, փյունիկի նման, սիրտս ելնում էր կրակի միջից, հայցը ռողդում դեպի կյանք ու մահ, պայքար էր կնքում բոցով առկայօն:

Սիրո Հայրենիք

Այդ օրվանից հետո հայրենիք եմ երգում, հայրենիք
եմ կանչում ու լսում, երբեմն ամուր գրկել եմ ուզում,
ինչպես երեխան իր թանկ մայրիկին:

Այդ օրվանից հետո շատ ու անծանոթ, բայց և
հարազատ եղայրներ են անմահանում, իսկ մենք՝
մահանում: Այդ օրվանից հետո մի երազանք ունեմ՝
անդավ, երջանիկ, հզոր հայրենիք:

Ծննդյանս նախօրեին էին, ավելի ստույգ՝
27.09.2020: Արթնացա ու վազեցի մայրիկիս մոտ .

-Ուռա՛, երեք օրից տասներեք տարեկան եմ
դառնալու:

-Ուռ երջանիկ ես Լուիզա, բայց երկրում պատերազմ
է:

-Պատերա՞զմ,- ես քարացել էի, մի պահ կարծեցի որ
Տավուշյան դեպքերից հետո առաջացող սարսափելի
երազներիցս հերթականն է, կսմթեցի ձեռքս ու
համոզվելով, որ ամեն բան իրական է, վազեցի
հեռուստացույցի մոտ: Բոլոր հեռուստաալիքները
խոսում էին. «Զհայտարարված, բայց հայտարարված
պատերազմ»-ի մասին: Ժամերով համացանցն էի
թերթում ու կարդում նորությունները, հասկանում, որ
հակասում են իրար բոլոր նյութերն ու որ անհնար էր

Լուիզա Բաբայան

զանազանել հրապարակումների իսկուրյունն ու
կեղծիքը: Ամեն ոք անում էր այն, ինչ իրեն էր
ձեռնտու: Այդ օրերին համացանցը բաժանվել էր
հայկական և աղբբեջանական կողմերի, և ակամայից
հարազատ էին դառնում բոլոր նրանք, ովքեր
հանդես էին գալիս «Artsakh is Armenia» խորագրով:
Փաստացի պատերազմ էր ընթանում նաև
սոցիալական հարթակներում: Աղբբեջանցիները
կոտրում էին հայկական սոցցանցերն ու
ապատեղեկատվություն տարածում՝ խուճապ
առաջացնելով հայ բնակչության մեջ: Սուկալի
տեսանյութեր էին տեղադրում, որոնց միջոցով
հոգերանական ճնշում էին գործադրում:

Թիկունքում դժվար էր, սահմանին՝ Էլ ավելի:

Ամեն անգամ զոհված զինվորների անունները
լսելիս սիրտս չարանում էր: Այն աղջիկն ով իր
կյանքում մի ճանճ անգամ չէր սպանի, լցվում էր
աններելի ցանկությամբ՝ մի ողջ ազգ վերացնելու:
Չե, չեմ ուզում ատելություն տարածել, ինչպես նրանք
են անում, պարզապես ճշմարտությունն եմ ասում:
Այդ ազգը դաժան է ու բարբարոս, զորկ մարդկային
բոլոր հատկանիշներից: Իրենց զավակներին ծնված
օրվանից հային ատել են սովորեցնում, դրանք էլ
վարժեցված գազանի նման մեր դեմ են ելնում ու հող
պահանջում: Մեր մշակույթը իրենցն են արել, իսկ

մեզ գող կարգել, մինչդեռ մի դար է ինչ ազգ են
դարձել:

Սեպտեմբերի 29-ին դասարանի աշակերտներով
մեր դասղեկի՝ ընկեր Խոջոյանի հետ կայացրած
որոշման համաձայն, գնացինք խանութ՝ անհրաժեշտ
պարագաներ, սնունդ, ջուր գնելու և սահման
ուղարկելու համար: Խանութում մեզ մոտեցավ մի
երիտասարդ, ով ևս պատրաստվում էր մեկնել
ճակատ: Օգնեց, որ տեղավորենք բոլորն իրերն ու
հեռացավ: Այդ պահին հասկացա, որ չկա ավելի վեհ
երևույթ, քան երբ ծանոթ ու անծանոթ մարդիկ
հավաքվում են մի գաղափարի շուրջ, որդեգրում
ընդհանուր պայքար, որը մի անուն ունի՝ հայրենիք:
Իրոք, ես ապշած իմ, մեր միասնականությունը,
հավատը, հայրենասիրությունը սահմաններ չունեին:
Այժմ Վստահաբար կարող եմ ասել՝ ոչ ոք չի սիրի իր
հայրենիքը, ինչպես որ հայը, ոչ ոք չի կովի իր հողի
համար այնքան նվիրված, որքան որ հայը, ոչ ոք չի
դավաճանի իր ազգին այնպես, ինչպես որ հայը:
Կատարյալ ենք, ինչ խոսք:

Հաջորդ օրը լրանում էր տասներեք ամյակս:
Այնքան երկար էի սպասել այդ օրվան: Զարմանալի
է չէ, երբ փոքր ենք, ցանկանում ենք շուտ մեծանալ,
իսկ երբ մեծանում ենք, ամեն կերպ փորձում ենք ետ
20

Լուիզա Բաբայան

բերել մանկությունը: Ցավոք, ժամանակը խաղալիք չէ, հակառակը՝ մենք ենք նրա խաղալիքները:

Ծննդյան նվերները, որոնք մեծ մասամբ քաղաքավարությունից են և տրվում, այդքան էլ արժեքավոր չեն: Հիմա եմ հասկանում, որ ծննդյան միակ նվերը հարազատ մարդկանց ներկայությունն է, որ կարող եմ վայելել՝ տեսնելով նրանց, զգալով նրանց շունչն ու ձեռքերի ջերմությունը: Կարող եմ նրանց ներկա նշանակել ու պարտադրել, որ հաջորդ դասին էլ չբացակայեն:

Ես չեղարկել էի հավաքությը, քանի որ չէի կարող զվարճանալ այն դեպքում, եթե սահմանին կյանքի ու մահվան կոփի էր մղվում, եթե հարյուրավոր տղաներ իրանց կյանքի գնով էին տալիս՝ մեզ ապրելու հնարավորություն: Իսկապես, որքա՞ն մաքուր պիտի ապրենք, որ արժանի լինենք նրանց շապրած կյանքին:

Այնուամենայնիվ մտերիմ ընկերուիիներս եկան մեր տուն ու շնորհավորեցին: Ստիպեցին, որ ժպտամ, որովհետև սահմանին կանգնած տղերքը պահանջում են մեզնից, որ ժպտանք, թե՛ մեր և թե՛ նրանց փոխարեն: Նրանց դեմքին այլևս ժպիտ չի դրոշմվի ու մենք իրավունք չունենք մեղադրելու նրանց՝ այդքան անտարբեր լինելու մեջ: Նրանք ապրում են, որ մեզ ապրեցնեն, նրանք ցավում են, որ մենք ցավ

Սիրո Հայրենիք

չզգանք, նրանք չեն կովում հերոսների պես, այդ հերոսներն են կովում նրանց պես:

Տորթի մոմերը փշելիս երազանք պահեցի, որ պատերազմը շատ շուտ ավարտվի ու կարևորը՝ մեր հաղթանակով:

Երևի բարձրաձայնել էի երազանքս, կամ էլ աչքերս էին պատմել դրա մասին. . .

Ասզորությունից դեպի զորություն ես մի քայլ ունեի՝ աղոթել: Հասկանում էի, որ ինչքան էլ ցանկանամ ոչինչ անել չեմ կարող, բայց աղոթելուց հետո վստահ էի, որ իմ աղոթքը ինչ-որ զինվորի, ինչ-որ մի վայրում փրկեց թշնամու փամփուշտից, արկից, դաժան վարմունքից: Ու հիանում էի իմ Աստծոն զորեղ, դարձյալ աղոթում զինվորիս համար:

Ավելի սիրով էի սկսել սովորել: Սովորելն ինձ համար պայքար էր դարձել, դասը սերտելը մի մեծ հաղթանակ: Գիտակցում էի, որ թշնամուն զիտելիքով կարող ես հաղթել: Նոյնիսկ լեզուն էի սովորել փորձել, բայց ես՝ հայոց լեզվի սիրահարս, չկարողացա սովորել այդ լեզուն, որովհետև տհաճ էին խոսքի ելսէջներն ու հնչունների արտասանությունը: Այս հայոց լեզու, գանձ ես իրական ու փառահեղ:

Լուիզա Բաբայան

Ուսուցիչներս, օ՛, որքան մեծ է նրանց դերը, որքան հրաշալի են նրանք: Միշտ պատրաստ են մեզ զինել նորանոր գիտելիքներով ու հայրենասիրական գաղափարներով: Մի օր դասղեկս խնդրեց, որ սովորենք «Մարտիկի երգը» ու հաջորդ օրը, ամեն դասաժամ սկսելիս երգենք, այդպես էլ արեցինք: Բոլոր ուսուցիչները սահմանին կանգնած ամուսին, որդի, հարազատ ունեին: Իրական հայ ընտանիք, երբ հայր ու որդի կրիվ են տալիս սահմանին կանգնած, իսկ մայրն իր ողջ ուժը հավաքած սերունդ է կրթում, գիտակ դարձնում: Աննկարագրելի ցավ էին առկայծում ուսուցիչներիս հայացքները ու երդվում եմ մի այնպիսի ուժ էին ինձ տալիս, որ բավական էր՝ թուրքին ծնկի բերելու համար: «Մենք զինվոր ազգ ենք, բայց պետք է դառնանք նաև դիվանագետ ազգ», «Տգետ ազգերին հեշտությամբ են ծնկի բերում, գրագետներին՝ երբեք», «Հայրենասիրությունը սկսվում է հայրենաճանանաչությունից», - ասում էր աշխարհագրության ուսուցուիհս ու հարյուր անգամ բացատրում չհասկացված դասն ու կարմիրով ընդգծում մեր երկրի սահմանները: Միինոն անգամ կպատմեր դասն ու կպատասխաներ մեր բոլոր տարօրինակ ու հետաքրքիր հարցերին պատմության ուսուցուիհս, ու արթնացրեք քնից և ես կպատմեմ ողջ պատմությունը, որ դրվագն ուզեք: «Սիրեք ձեր

Սիրո Հայրենիք

լեզուն, ոչ օտարինը», «Աևակ ու Չարենց, Տերյան,
Մեծարենց, Շիրազ ու Զորյան, Թումանյան, Րաֆֆի,
Աղայան, Ասանյան, Սունդուկյան, Պարոնյան,
Ժոթռվենց, Իսահակյան և այլ մեծերի գործեր
ընթերցեք, պետք կգան կյանքում», ասաց
գրականություն ու լեզու դասավանդող ուսուցչուհիս
ու կարդացի ես, սիրեցի Րաֆֆու «Խենթ»-ը
անսահման, գլուխգործոց էր, ճիշտ ու կատարյալ: Մի
որոշ ժամանակ անց գնացինք Էջմիածին և
այցելեցինք եկեղեցիներ, քանզարաններ: Գայանե
եկեղեցու բակում է գտնվում խենթի՝ Սամսոն Տեր-
Պողոսյանի գերեզմանը: Խենթը Վարդանն էր, ով
1877-1878թթ. ոուս-թուրքական պատերազմի
ժամանակ խենթ, քուրդ ծաղրածու ձևանալով
տեղեկություններ հավաքեց թշնամու բանակից և
օգնություն խնդրող նամակը ապահով հասցրեց
ոուսական բանակի հրամանատար Տեր-
Ղուկասովին:

Րաֆֆին ասել է. «Թշնամին մեղավոր չէ, եթե մեր
մեջ սիրտ լիներ, միություն լիներ, հիմար թշնամին
ի՞նչ կարող էր անել: Մենք պետք է սուր վեր առնենք
թուրքերին ոչչացնելու համար, որ մեր հայրերից
մեզ մնացած հողի վրա միայն մենք բնակվենք»:

Լուիզա Բաբայան

...Այն ժամանակ Հռոմում Դիմոկրետիանոս կայսրը հալածում էր քրիստոնյաներին և Հռիփսիմյանց կույսերը եկան Հայաստան՝ ապաստան գտնելու համար: Հռիփսիմեն աննկարագրելի գեղեցկության տեր կինն էր, և տեսնելով նրան հայոց արքա Տրդատ Մեծը սիրահարվում է, բայց քանի որ Հռիփսիմեն երդում էր տվել եկեղեցուն երբեք չամուսնանալու մերժում է նրան, ով էլ կարգադրում է սպանել Հռիփսիմյանց կույսերին: Նրանց նահատակման վայրերում հետագայում կառուցվում են Հռիփսիմե և Գայանե եկեղեցիները: Վշտից բեկված հայոց արքան հիվանդանում է, և ոչ մի քժիշկ չի կարողանում բուժել նրան: Տրդատի քոյլը՝ Խոսրովանդոխտը, երազ է տեսնում, ըստ որի Տրդատին կարող էր բուժել միայն Գրիգորը՝ Պարքն Անակի որդին, ով 13 տարի փակված էր Խոր Վիրապում: Գրիգորն իր աղոթքներով բուժում է Տրդատին և տեսնելով Աստծո զորությունը՝ Տրդատ Մեծը 301 թվականին քրիստոնեությունը Հայաստանում հռչակում է, որպես պետական կրոն: Այսպիսով հայերը դառնում են առաջին քրիստոնյա ազգը: Քրիստոնեության տարածմանը նպաստելու համար, Գրիգորն Լուսավորիչն ու Տրդատ Մեծը ավիրում են բոլոր հեթանոսական տաճարները, բացի Գառնիից, որը Խոսրովանդոխտի խնդրանքով թողնում են, իբրև ամառանց:

Սիրո Հայրենիք

Այցելեցինք նաև Եջմիածնի Մայր Տաճար, որը ըստ
Գրիգոր Լուսավորչի Նկարագրման, հիմնվել է իր
երազում տեսած Հիսուսի իշման վայրում և
կառուցվել Գրիգոր Լուսավորչի ու Տրդատ Մեծի
կողմից 303 թվականին:

Անկասկած, մեր երկրի ապագան հմուտ ու գիտակ
ուսուցիչների և նրանց կրթած սերնդի ձեռքբերում է:

«Իմ քաջ զինվորին»

Ի՞մ զինվոր, ի՞մ պահապան: Այս նամակը գրում եմ, որպեսզի հայտնեմ քեզ իմ երախտիքը: Քո շնորհիվ ես կարողանում եմ գլուխս հանգիստ դնել բարձին և քնել՝ իմանալով, որ կա մեկը, ով կհսկի իմ խաղաղ քունը:

Գիտեմ՝ դժվար է սոված-ծարավ, հոգնած, ծանր հոգեվիճակում, մտածելով զոհված ընկերոջ և օր ու գիշեր անհանգստացող մոր մասին, կանգնել սահմանին ու շոգ առավոտից մինչև ցուրտ ու մութ գիշեր կռվել թշնամու հետ: Խնդրում եմ՝ չփորձվես հուսահատվել, զգո՞ն եղիր, զգո՞յշ եղիր: Քեզ լա՞վ նայիր, որ իմանամ՝ զինվորս լավ է, ես էլ լավ լինեմ:

Ես ամեն վայրկյան աղոթում եմ քեզ համար և վստահ եմ, որ իմ աղոթքները պաշտպանում են քեզ ողորմելի թշնամու փամփուշներից:

8-րդ դասարանում եմ սովորում, բայց չեք պատկերացնի, թե ինչ հայրենասիրական ոգի են դրել իմ ու իմ ընկերների մեջ ձեր պես հզոր տղերքը: Ձեր շնորհիվ ենք մենք հասկանում, թե ինչ է հայրենիքը, հայրենիք սիրելն ու հայրենիքին նվիրվելը:

Սիրո Հայուենիք

Հաղթանակը մերն է լինելու, անկասկած,
որովհետև մենք այստեղ՝ Երկրի ներսում,
միասնական ենք, հավատով լեցուն, իսկ դուք
այդտեղ՝ դիրքերում, հզոր եք, ինչպես մեր լեռները,
սախնիները, հայը . . .

Պի՞նդ եղեք, տղե՛րք, սիրում ենք ձեզ շա՛տ:

#հաղթելուենք

Սիրով՝ Լուիզա

11.10.2020, Երևան

Լուիզա Բաբայան

2020 թվականի նոյեմբերի 9-ին կորցրինք Արցախի մի մասը: Շրջեցինք մեր գրքի վերջին էջն ու բացեցինք մի նոր գիրք, որտեղ պարտավորված ենք գրել մեր հաղթանակների մասին, հանուն այն հերոսների, որոնք մնացին մեր նախորդ ու սուրբ գրքում:

Փողոցում մարդկանց հայացքներին դառնության կսկիծ էր գոյացել, կարծես քարացել էր ողջ աշխարհը, հայոց աշխարհը: Որդեկորուս էր դարձել մեր հողը: Հարազատներիցս շատերը զոհվել էին, իսկ շատերին գտնել չէին կարողանում, վերջում պարզ դարձավ, որ նրանք ևս մահացել են:

Դատերազմից հետո իմ կյանքում շատ բան փոխվեց, գեղեցիկն ավելի տեսանելի դարձավ, իսկ վատը՝ անընդունելի: Ինձ համար Երևան-Իջևան ճանապարհը միշտ հոգնեցուցիչ է եղել, իսկ հիմա ես պատրաստ եմ օրերով ճանապարհներ անցնել, միայն թե այդ երկա՞ր ճանապարհներն իմ հողում լինեն:

Երբ տատիկիս տուն էի գնում, այլևս պատշգամբ դուրս չէի գալիս ու աստղերին չէին նայում, որովհետև ատում էի իմ սիրելի աստղերը, զզվում էի լուսնից, բայց աստղերը չէի մեղավոր և ոչ էլ լուսինը,

Սիրո Հայրենիք

այլ նրանք, որ իմ պայծառ աստղը լուսնի հետ
դաշեցին իրենց դրոշին ու ինձ հավատարիմ մնաց
միայն արևը, որին նայելիս պետք է ծակծկվեին
աչքերս ու կարոտեի լուսինը, որին ժամերով կարող
էի նայել: Բայց չէ, ես իրականում չեմ սիրել լուսինը,
ես ուղղակի երեխա էի, հիմա եմ հասկանում, որ ես
սիրում էի լուսինը, որովհետև ինձ կապում էր արևի
լուսի հետ: Լուսինը կեղծ էր, աստղերը՝ մեռնող, իսկ
արևը՝ անմար բռնորիս համար, խաղաղ երկնքի ու
մեր լուսավոր ապագայի համար:

Մի քանի տարի անց իմ եղբայրները,
դասընկերներն ու այլ հայ զինվորներ են սահմանին
կանգնելու և ես թախանձում եմ, որ այն միշտ
արևավառ լինի . . .

Վերջին ժպիտը

Աշուն էր, թերևս ոչ սիրո: Կամավորականների մի խումբ հավաքվել էր այն ավտոբուսի դիմաց, որը բռպեներ անց մեկնելու էր Շուշի: Ավտոբուսի մոտ վազեցին երկու փոքրիկ աղջկներ՝ փայլուն աշխատով:

-Հայրի՞կ, նամակն ես մոռացել,- ասաց Սիլվին ու նետվեց հոր գիրկը: Յուրիկն ամուր գրկել էր դստերն ու խեղդում էր արցունքները, որպեսզի հանկարծ չնկատեն:

-Խոստացի՞ր, որ շուտ կգաս, մենք քեզ շատ կկարուտենք,- աչքերը տրորելով՝ ասաց Արմինեն, ով մոտավոր պատկերացում ուներ, թե հայրը ուր է գնում:

-Ես գնում եմ, բայե՛ս, որ ձեզ պաշտպանեմ, մեր հողը պահեմ, ու երբ կոիվն ավարտվի, անպայման կգամ: Դուք ձեզ լավ նայեք, մամային կլսեք:

Վերջին անգամ հրաժեշտ տալով աղջկներին՝ Յուրիկը հեռացավ: Ամրող ճանապարհին մտածում էր իր ապրած տարիների, ընտանիքի ու այն վրեժի մասին, որ պիտի լուծեր:

Սիրո Հայրենիք

Շուշիում ամենաթեժ մարտերն էին ընթանում,
հաճախակի ներթափանցման փորձեր էին լինում:
Մերոնք համառորեն դիմադրում էին:

-Ես ի՞նչ սոված եմ, տղե՛րք, քանի՛ օր հաց չենք
կերել:

-Այ ախպեր, էդքան թուրքի գլուխ ես կերել, հերիք
չի՛, - ասաց Յուրիկն ու բոլորով սկսեցին ծիծադել:

-Դե հիմա այսպիսի բան է պատերազմը, պիտի
սոված էլ մնանք:

Բոլորը լուռ էին, հիշում էին իրենց մայրերին, թե
ինչ սիրով էին ուտելիք պատրաստում ու անհամբեր
սպասում գնահատականի, ծածկում էին քնած
ժամանակ ու համբուրում, գիշերները չէին քնում, որ
բուժեն իրենց հիվանդ զավակներին: Իսկ այդեղ՝
կրվի դաշտում, մի մաշած ծածկոց ունեին, ու դա էլ
էր փառք:

Հանկարծ ձայներ լսվեցին. տերևների խշխշոց էր,
երևի ինչոք մեկը մոտենում էր, բայց ո՞վ կարող էր
լինել: Տղաներից մեկը լիցքավորեց զենքն ու առաջ
գնաց, ոչ ոք չկար, երբ ցանկանում էր հետ
վերադառնալ ազերի հետախույզներից մեկը
դանակահարեց նրան: Տղաները զգալով, որ
Վարդանը ուշանում է, դիրքավորվեցին: Դավադիր

Լուիզա Բաբայան

կրակոց, տղաներից մեկը վիրավորվեց: Մի քանի
րոպէ անց դադարեցին կրակոցները, հակառակորդի
կենդանի ուժը ոչչացված էր, հայկական կողմից
զոհեր և վիրավորներ կային:

-Երբեք չէի մտածի, որ ինձ չեմ ների ողջ մնալու
համար,- լաց էր լինում կամավորականներից մեկը,-
ինչ զգվելի է պատերազմը, առանց զգացմոնքի
հարյուրավոր մարդկանց ենք կոտորում: Տղերքին
կորցնելուց հետո ինչքան էլ ջարդում եմ դրանց էլ չեմ
հովանում, մի պահ կար ուրախանում էի թուրքին
սատկացնելուց, հիմա սովորական է դարձել: Արդեն
էլ զգացմոնք չունեմ, տղե՛րք, էլ ինձ մարդ չեմ զգում,
տղե՛րք, այլ անխափան մեխանիզմ՝ ծրագրավորված
մարդ սպանելու: Ծարավից բերանս չորացել է, բայց
դա նշանակություն չունի, երբ սիրտս է կարոտից ու
ցավից հրկիզվում:

- Ե՛հ, պատերազմի ժամանակ կյանքին ուրիշ
աչքերով ենք նայում, սկսում ենք գնահատել անգամ
ամենաչնչին բաները, որովհետև լցվում ենք դրանք
կորցնելու վախով: Պատասխանատվությունը
մեծանում է ծնողների, ընտանիքի ու հարազատ
մարդկանց նկատմամբ, որովհետև կովի դաշտում ոչ
ոք ապահովագրված չի:

Սիրո Հայրենիք

-Ես կոհվները լրիվ թվաբանության դասեր են, ամեն օր դրանց մասերի ենք բաժանում, բայց բազմապատկվում են ու գալիս:

-Ավելի շատ խաղի է նման, մենք էլ՝ խամաճիկների: Ոմանք ցանկանում են, որ մենք խաղանք, անունն էլ դնում են պատերազմ, ու դե գնացեք: Ի վերջո 21-րդ դարում ենք ապրում, եթե մարդիկ չցանկանան պատերազմ, չի լինի, բայց չէ՝ որ շատերն են սիրում պատերազմի մասին ֆիլմեր դիտել՝ ամեն մեկն իր երկրում, շքեղ տան շքեղ բազմոցին նստած:

-Ճիշտ ես, շատերը իբրև քննադատում են, բայց դա նույնն է, ինչ իրար հարվածող երեխաների տեսնես, ասես. «հորդորում եմ, որ դադարեցնեք» ու շարունակես ճանապարհ, է շատ է իրենց պետք քո օդում ցնդող հորդորները, գնա՛, բաժանի՛ր, հարցին լուծում տու՛ր, ի վերջո մեծ ես կոչվում:

Մի քանի րոպե անց եկավ Յուրիկը:

-Ես ու՞մ ընկերոց ծնունդն է էսօր:

-Այ, ինչ ծնունդ է, դե դու էլ:

-Թքած ունես հա՛ տորթիս վրա,- ասաց Յուրիկը՝ ցույց տալով ձեռքի հացն ու վրան դրված մոմը,- փչի՛, ա՛յ ախապեր, որ հացը ուտենք,- բոլորով ծիծաղեցին:

Լուիզա Բաբայան

Ու այդպես շարունակ տղաները կոիվ էին մղում
թշնամու դեմ: Մարտերի ժամանակ շատերը
զոհվեցին, վերջին օրերին մի քանիսն էին ողջ
մսացել, այդ թվում՝ նաև Յուրիկը:

Ամեն ինչ խաղաղ էր, անտառում լուրջուն էր:

-Վաղը պիտի տուն վերադառնամ ձագերիս մոտ, չեմ
համբերում՝ երբ եմ գրկելու երեխերիս, Էնքան եմ
կարոտել, այդ ախաղեր, էլ դու սուս:

-Հասկանում եմ, ցավդ տանեմ, մեր երեխերից թանկ
բան չկա էս աշխարհում:

-Իմ երեխերը պիտի ցավ չտեսնեն, պիտի էս հողում
տիրոջ կարգավիճակով ապրեն, հերիք եղավ արդեն:

-Քանի՞ երեխա ունես:

-Երկու լույսի պես աղջիկ ունեմ, ախաղե՛րս, էս ամեն
ինչը ավարտվի, մի հատ էլ տղա եմ ունենալու:

-Այ՛ թե առյուծի ձագ է տղեղ լինելու, - Յուրիկը լայն
ժպտաց, բայց հանկարծ ժպիտը քարացավ դեմքին,
ճակատից արյուն էր հոսում, կյանքը մարել էր նրա
մարմնում. հակառակորդի դիպուկահարն էր . . .

Երեխաները իրենց հորն էին սպասում, մինչ այդ
չարաբաստիկ զանգը կպատմեր Յուրիկի մահվան
բոթի մասին.

Սիրո Հայրենիք

-Մայրի՞կ, ե՞րբ է զալու հայրիկը:

-Չի զալու, բայե՛ս, -լաց լինելով՝ պատասխանեց Նարինեն,-ես ձեզ չեմ ստի, ձեր հայրը զոհվել է, նա հերոս է, հայրենիքի ու մեր հերոսը:

-Մայրի՞կ, հայրիկը մեզ էլ չի՝ սիրում, նա հեռացե՞լ է մեզնից:

-Սիրում է, քա՛ղցրս, պարզապես հիմա երկնքում է, և չես կարող զգալ նրա սերը:

-Ո՛չ, դու ստում ես, մայրի՞կ,- բղավեց Սիլվին,- եթե մեզ սիրեր, գոնե երկնքից կզանգեր:

Երեխաները լաց էին լինում ու գոչում՝ «Պապա՛», երբ տան դուռը բացվում էր, վազում էին այնտեղ՝ կարծելով, թե իրենց հայրն է, բայց դռան դիմաց տեսնելով մեկ ուրիշին՝ հուսահատությունից ավելի ուժեղ էին բղավում: Նրանք այն կամակոր երեխաներից չէին, որ նոր հեռախոս ու խաղալիքներ են պահանջում, նրանք պարզապես իրենց հորն էին ուզում, որ այս անիրավ աշխարհը խլեց իրենցից: Մայրն ուժեղ էր ձևանում, բայց տանջվում էր ամենաանտանելի ձևով: Այժմ ստիպված էր միայնակ մեծացնել իրենց զավակներին, իրենց սիրո պտուղներին: Դատված էր հավերժ զրկվել սիրո բերկրանքից ու իր թիկոնքից: Ո՛վեր էին այդ

Լուիզա Բաբայան

դատավորները, ներեցեք, բայց թող կորչեն երկրի
երեսից ու դատվեն իրենց դատից բազմակի անգամ
ծանր վճռով:

Բոլոր երկրների իշխանավորները պարզապես
թքած ունեն հասարակ քաղաքացիների վրա: Հուսով
եմ՝ կզա մի ժամանակ, որ իշխանությունը կվերանա,
ու բոլոր մարդիկ կլինեն հավասարը հավասարին,
իսկ այն մարդիկ, ովքեր շարունակ բարձրացրել են
իրենց անձն ու խոնարհեցրել բոլորին, կխոնարհվեն:

Իրական հերոսը

Ծնվելու հետ մեկտեղ մենք Աստծո կողմից
ստանում ենք մեր բաժին ճակատագիրը, որը պիտի
որոշի մեր տեղն այս կյանքում: Եվ եթե բախտը
ժառանգ մեզ, մենք կարող ենք լինել ինչ-որ մեկի
հերոսը: Ես հերոս չեմ, բայց ունեմ հերոս, իրական
հերոս: Իմ հերոսը ձեր ֆիլմերի հերոսների նման
շենքից շենք չի ցատկում, ձեռքով մեքենաներ չի
բարձրացնում կամ էլ փրկում աղջկան յոթգլխանի
դևից: Իմ հերոսը չունի գերբնական ուժ, ինչպիսին
ֆիլմերի ու հեքիաթների հորինված հերոսներն
ունեն, բայց նա ունի այնպիսի շնորհը, որ անզոր է
երևակայել մարդկային ամենակարող ուղեղը:
Որպեսզի հասկանաք, թե որքան իրական է իմ
հերոսը, մի պատմություն պատմեմ, բայց խնդրում
եմ, որ կարդաք հասկանալով, զգալով, որովհետև
այդ պահը եղել է, այդ պահը զգացել են ու ապրել,
որովհետև այդ պահը մի ամբողջ կյանք է փոխել:

Զրականում մարտեր էին: Գառնիկը ծառայում էր
հակատանկային դասակում և այդ 6 հոգանոց
ստորաբաժանումը գործում էր գումարտակից
անկախ: Դասակի հրամանատարը պատերազմի
առաջին օրերին վիրավորվում է և տեղափոխվում
Երևան: Գառնիկը, սերժանտ լինելով, իր վրա է
վերցնում հրամանատարությունը: Դժոյա պայքար էր

Հովհան Բաբայան

ընթանում: Հակառակորդը սանձարձակ էր, բայց մեր տղերը ամեն կերպ դիմադրել էին փորձում:

Թշնամին տանկերով գրոհի էր անցել.

-Գառնիկ, վիճակը շատ վատ է, մենք հաստատ ողջ չենք մնա:

-Մենք դրանց պիտի հաղթենք,-հայիոյանքով ասաց Գառնիկն, ու սկսեցին հրետանակոծել հակառակորդի տանկերը: Նրանք կարողացան հմտորեն խոցել հակառակորդի տասնմեկ տանկերը, այդպիսով նրանց հաջողվեց մի որոշ ժամանակ լուցունել թշնամուն: Գառնիկը, վտանգելով սեփական կյանքը, զոհված ընկերների մարմինները դուրս բերեց չեզոք գոտիներից:

Նոյեմբերի 2-ի գիշերը լույս 3-ի առավոտյան տեղի ունեցավ դիվերսիոն խմբի հարձակում: Դժբախտաբար, տղաները՝ Եղվարդը, Արմանը, Առնոլդը, Կարենը, զոհվեցին՝ դառնալով շատերի հերոսներն ու հուշերի սրբազան աղբյուրը: Եվ մսացին երկու ընկեր, իսկ թշնամին արդեն մոտենում էր:

-Համարձակ առաջ ենք գնում, Արե՛գ, վայրկան անգամ չմտածես, եթե մեռնելու ենք, իրար հետ ենք մեռնելու,- ասաց Գառնիկն ու սողեսող մոտեցավ

Սիրո Հայունիք

զոհված ընկերներին, վերցրեց նոնակն ու
վերադարձավ Արեգի մոտ:

-Երբ մոտենան, կպայթեցնենք ու դրանց էլ մեր հետ
էն աշխարհ կտանենք:

-Չէ՛, Գառնի՛կ, ես ապրել եմ ուզում,- անկեղծորեն
ասաց Արեգը:

Տեսնելով հակառակորդին՝ Գառնիկը զգաց, որ
նկատել են իր ձեռքի նոնակը, արագ գրկեց ընկերոջն
ու փամփուշտները խրվեցին Գառնիկի մեջքի մեջ.

-Հորս ու մորս եթե տեսնես, կասես՝ թող ներեն ինձ:

Բարբարոս թշնամու հարձակումներն ու
ունձգությունները երբեք չընկճեցին իմ հերոսի՝
Գառնիկի հավատը, ընդհակառակը, նա մինչև վերջ
կրվեց՝ գիտակցելով մահվան և անմահության խորին
խորհուրդը: Գառնիկն անմահացավ մեր
հիշողություններում և այնտեղ կապրի այնքան, քանի
դեռ նրան հիշում ենք, իսկ հերոսներին երբեք չեն
մոռանում:

Ասացե՛ք, խնդրում եմ, մի՛թե սա իրական
հերոսություն չէ, մի՛թե Գառնիկն իրական հերոսի
մարմացում չէ, ով հանուն հայրենիքի, հանուն
ժողովրդի ու ընկերոջ պայքարեց մինչև վերջին
շունչը: Եվ քանի՛ քանիսը Գառնիկի հետ մարտի

Հոփական Բարայան

դաշտում դարձան մեր լուսավոր ապագայի
կերտողը՝ մարելով իրենց կյանքի լույսը, որ դեռ
ավելի ուժգին պիտի լուսավորեր աշխարհը, քան
արևը: Հերոս չե՞ն այն մայրերը, որ սփոփում են
իրենց մանուկներին՝ ասելով, թե իրենց հայրը կզա,
բայց հոգու խորքում գիտակցում, որ իրենց հորը
այլս չեն տեսնելու: Հերոս չե՞ն այն երեխաները, որ
շարունակում են սպասել իրենց հայրերի
վերադարձին: Հայրեր, որոնք իրենց արյամբ
պահեցին հայրենի հողը: Այդ մանուկների համար
իրենց հայրերն իրական հերոսներ են:

Եվ գիտեք, ես Էլ եմ հերոս, որ ծնվել եմ այս
հերոսածին հողում: Բայց Էլ չեմ ուզում ունենալ
հերոսներ, եթե նրանց հերոսանալն իրենց կյանքի
գնով է հանուն կյանքի, որ մենք պետք է ապրենք
նրանց փոխարեն:

Թռ' ն փառաբանվի հերոսն իմ անմահ՝

Սոսկալի կովում նահատակ դարձած,

Թռ' ն լուսավորվի ճամփեն տղերքի՝

Կովի օրերից դեռ տուն չդարձած:

Սիրո հայրենիք

Ծերունին, ով կարդում էր սիրավեպը տիկնոց համար, Նոյն էր, իսկ տիկինը՝ Էլին:

Նրանք բավականին ծերացել էին, և Էլին պարբերաբար կորցնում էր հիշողությունը: Բոլորը կարծում էին, որ Էլիի հիշողությունը այևս առաջվանը լինել չի կարող, որ անօգուտ է ամեն բան: Նոյը, չնայած այդ ամենին, շարունակում էր լինել իր սիրելիի կողքին և հոգ տանել նրա մասին:

Օրերից մի օր նրանք հայտնվեցին հիվանդանոցում՝ տարբեր հիվանդասենյակներում: Նրանց մի քանի սենյակ էր բաժանում: Գիշերը, երբ բոլորը քնած էին, Նոյը գնաց Էլիի հիվանդասենյակ

.

-Հե՛յ, Էլի՛, ինչպե՞ս ես:

-Ա՛խ Նոյ, ես կարոտել էի քեզ: Գիտակցությունս գթաց ինձ ու թույլ տվեց հիշողություններին մի վերջին անգամ պատմել ինձ քո մասին, բայց ի՞նչ է լինելու, երբ արժանանամ նրա անողոքությանն, ու մեռնեն բոլոր հիշողությունները:

Լովիզա Բաբայան

-Այլս չեն լինի հիշողություններ, որովհետև չենք լինի նաև մենք,-ասաց Նոյը, պառկեց Ելիի կողքին և բռնեց նրա ձեռքը:

-Կարծում ես մեր սերն այնքան ուժեղ է, որ երկուսիս միասին կտանի՞:

-Իհարկե, սիրում եմ քեզ Ելի, սիրել եմ միշտ ու դեռ կսիրեմ երկնային կյանքում:

-Ես Էլ քեզ եմ սիրում, Նոյ... .

Առավոտյան, երբ բուժքույրը մտավ հիվանդասենյակ, ուղղակի ապշած մնաց. Ելին ու Նոյը մահացել էին՝ իրար ձեռք բռնած: Նոյիսիսկ մահը չէր կարողացել բաժանել նրանց մոլագար սիրով շղարշված սրտերը:

-Հուզի պատմություն էր, նախանձել կարելի է նրանց սիրուն:

-Մեր սերն էլ այդպիսին կլինի, խոստանում եմ:

Արելը գրկեց Արելինային և աշխարհը քարացավ՝ նրանց անսահման սիրո ելսէջներից:

-Գիտես, Արե՛լ, կարծում եմ նրանք երբեկցե բաժանված չեն եղել, եթե նրանց սրտերը կապված չլինեին, Նոյը ոչինչ էլ իր օրագրում չէր գրի, նրան չէր հիշի:

Սիրո Հայրենիք

-Ծիշտ ես, ժամանակն ու հեռավորությունը չեն
կարող բաժանել իրար սիրող սրտերը:

-Նրանք, դրժելով մահվան հետ կապած անհերքելի
պայմանը, մեռնել՝ չտանելով աշխարհից ոչինչ,
իրենց հետ տարան ամենակարևորը՝ սերը:

-Այո՛, Աղե՛լ, իրական սիրոն ոչինչ հաղթել չի կարող,
ես հավատում եմ դրան:

-Քայց ասում են սերեր կան, որ պարտվում են
մանրութներին:

-Չէ՛, ուրեմն դա սեր չի, պատրանք է, կեղծիք:
Ցավալի է, որ շատերը չեն հասկանում, թե ինչ է
սերը և ինց այդ կեղծ ու չգիտակցված «Սերեր»-ն
են, որ պարտվում են մանրութներին:

-Այս սերը դա ամենաքարի, ամենաքաղցր,
ամենաուժեղ... Երկար կարող եմ շարունակել
դրական ամենաների շարքը, դրա համար կարճ
կասեմ՝ Աստված սեր է:

-Գիտես, Աղելին, ես էլ եմ հիշողության օրագիր
պահելու, որ քո մասին մտածածս, քո հանդեպ
զգացածս, քո հետ ապրած ամեն վայրկյանս շունչ առ
շունչ հիշեմ: Սիրում եմ քեզ և ուզում եմ դրա մասին
ողջ աշխարհին իմանա: Սիրում եմ քո աչքերը ջինջ,

Լովիզա Բաբայան

որոնք նման են խաղաղ երկնքի, որը արտացոլվում է իմ էռությունը, որ շղթայել ես քո հոգում ամուր:

-Լա՛վ, վերջացրո՛, այդ գեղեցիկ խոսքերդ դեռ էլի եմ ուզում լսել, չեմ ուզում վերջանան:

-Բառերն անսահման են, լեզուներն էլ շատ, հավերժ կարող եմ պատմել մեր սիրո մասին, անհո՛գ եղիր:

-Աբե՛լ, սիրում եմ քեզ, խոստացի՛ր, որ երբեք մենակ չես թողնի, այլապես ես... ես չեմ ապրի առանց քեզ:

-Լոհի՛ր, հիմար բաներ ես խոսում: Մենք միշտ միասին կլինենք, լսու՞մ ես, միշտ: Ու թեկուզ մեր սիրո մասին չեն խոսի, ինչպես Ռումենյի և Զուլիետի սիրո մասին, բայց դու իմացիր՝ ես սիրում եմ քեզ ավելի, քան Ռումենն Զուլիետին, և ոչ մի սուր չի խոցի իմ սիրտը, որովհետև այն քոնն է, քեզ մոտ:

-Գուցե կխոցի, Աբե՛լ, բայց իմը: Իմ սիրտն էլ քոնն է, հոգիս էլ հետը:

Լոռություն էր, լոռություն, որ ավելի խոսուն էր, քան հազարավոր ասված ու շասված բառերը:

-Գեղեցիկ են չէ՛ աստղերը, անվերջ կարելի է նայել ու չհոգնել դրանց փայլից:

-Գեղեցիկ են, բայց դեռ քեզնից սովորելու շատ քան ունեն:

Սիրո Հայունիք

-Ե՛, Արե՛լ, ես արդեն ամաչում եմ քո
հաճոյախտառթյուններից:

-Մեր սիրո համար են ծնվել գիշերվա բոլոր
աստղերը,- ասաց Արելն ու զրկեց Աղելինային,-
դողու՞մ ես, Աղելինա՛, արի տուն գնանք:

-Ես սիրում եմ ցուրտը, որովհետև այդ ժամանակ ես
ավելի շատ եմ զգում քո ջերմության կարիքը:

-Ուրեմն շարունակիր սիրել ցուրտը,-ծիծաղեց Արելը,-
բայց եթե հիմա տուն չգնանք ու դու հիվանդանաս,
անակնկալդ կփչանա:

-Ի՞նչ անակնկալ:

-Դե, որ ասեմ, այլևս անակնկալ չի լինի:

-Օ՛, լա՛վ, համաձայն եմ:

-Ի դեպ շուտ կարթնանաս, ճանապարհ ունենք
գնալու:

-Ի՞նչ ճանապարհ:

-Աղի՞:

-Լա՛վ, լա՛վ, էլ հարցեր չեմ տա,- ծիծաղեց Աղելինան
և գնացին:

Լովիզա Բաբայան

-Դե ինչ, բարի գիշեր Արել,- քնքշանքով ասաց

Աղելինան և բարձրացավ տուն:

-Բարի գիշեր, բայց անուշ երազներ մաղթելու
փոխարեն, ուզում եմ, որ քո երազներում միշտ ինձ
տեսնես,- ինքն իրեն շշնչաց Արելն ու հեռացավ:

Գիշեր էր՝ խորիրդավոր ու աստղազարդ:
Աղելինան նստել էր պատուհանի դիմաց,
մերթընդմերթ ժպտում էր, երևի լուսնի հետ էր
խոսում:

Վերերկրային զգացողություն է սերը, այն
կարողանում է մարդուն դարձնել փոքրիկ երեխա՝
անմեղ ու պարզամիտ:

-Դու գեղեցիկ ես, լուսի՞ն, բայց ների՞ր, դու ոչինչ ես
նրա փայլող աչքերի դիմաց: Երբեմն մտածում եմ, թե
ինչպիսին կլինի կյանքս առանց նրա ու նույն պահին
ցանկանում եմ կորցնել գիտակցությունս՝ նման
անհեթեթ բաներ չպատկերացնելու համար: Եթե նա
չլիներ, ես էլ չէի լինի, եթե սեր չլիներ, մենք էլ չէինք
լինի: Այս, լուսի՞ն, մի օր կգանք քեզ մոտ, որ
մոտիկից տեսնես ու զգաս մեր սերն ու նրա
արձակած ջերմությունը:

Սիրո Հայրենիք

Առավոտյան, երբ արթնացավ, վերցրեց հեռախոսն ու գրեց Արելին. «Արել՝, ես արթնացել եմ, ի՞նչ անեմ»:

Ժամը վեցն էր և Աղելինային թվում էր, թե Արելը քնած կլինի, բայց վայրկյաններ անց եկավ պատասխան հաղորդագրությունը. «Շատ լավ է, սիրում եմ պատասխանատու տեսակդ: Դատրաստվի՞ր, հետդ տաք հագուստ էլ կվերցնես»:

Աղելինան արեց այն ամենը, ինչ Արելն էր ասել, քանի որ ժամանակ ուներ, նաև ուտելիք պատրաստեց:

Ժամը ութին նրանք Սևանում էին: Եղանակը անսելի հանգստություն էր պարզեւում, հաճելի սառնություն էր, որ ստիպում էր կղզիանալ մտքերիդ հետ ու տարանջատվել աշխարհից:

-Գեղեցիկ է չի՝ մեր Գեղամա ծովը:

-Այո՛, անպատմելի գեղեցկություն ունի, այն աչքերով է պետք տեսնել:

-Սև-Վան, տեսնես ինչո՞ւ են այդպես անվանել:

-Ըստ վարկածներից մեկի անոնը ծագել է, երբ վանեցիները Սևան են եկել: Քանի որ Սևանում համեմատաբար ավելի ցուրտ է եղել, քան Վանում,

Լովիզա Բաբայան

ասել են. «Ես ինչ սև Վա՞ն եկավ մեր գլխին», որից էլ առաջացել է «Սևան» անվանումը:

-Տեսնես կլինի՝ ինչ-որ հարց, որի պատասխան չիմանաս,- ծիծաղելով ասաց Աբելը:

-Կլինի, ես չգիտեմ, թե ինչու ենք այս ժամին եկել Սևան:

-Ուզում էի մենակ լինեինք և խոսեինք, բայց հիմա արի՝ նախաճաշենք:

-Ծիշտ ես, իսկապես շատ հանգիստ մթնոլորտ է զրուցելու համար, իսկ նախաճաշի հարցը հիմա կլուծեմ:

Աղելինան հանեց Աբելի համար պատրաստած համեղ ուտելիքները, ու սկսեցին նախաճաշել:

-Դու՝ ես պատրաստել:

-Այո՛, չհավանեցի՛ք:

-Չէ՛, հակառակը, պետք է խոստովանեմ, որ ոսկեցրած ձեռքեր ունես:

-Շնորհակալ եմ,-ոգևորված պատասխանեց Աղելինան:

-Ա՛ղ, ասա՛ ինձ երեք բան, որոնք ամենակարևորն են քեզ համար կյանքում:

Սիրո Հայրենիք

- Ը՞մ, դժվար բան ես հարցնում:
- Իսկ դու փորձիր պատասխանել:
- Դու, ընտանիքս և հայրենիքս:
- Իսկ ընկերնե՞րդ:
- Գիտես, Աքե՛լ, ընկերները հաճախ կեղծ են: Իմ բախտը պարզապես ընկերների հարցում չի բերել: Ինչ վերաբերում է ընտանիքին անդամներին, ապա կասեմ, որ նրանց շատ եմ սիրում: Նրանք միշտ մտածում են իմ մասին, հոգ են տանում, անհանգստանում են ինձ համար: Ծիշու է, երբեմն վիճում ենք, բայց գիտեմ, որ ինձ սիրելով են վրաս բարկանում, չեն ուզում սխալվեմ ու կործանեմ կյանքս: Դրա համար էլ երբեք չեմ նեղանում նրանցից: Իսկ դու իմ օդն ու ջուրն ես, Աքե՛լ, քեզ ավելի շատ եմ սիրում ու վատահում, քան ինքս ինձ:
- Իսկ հայրենիքը, ինչո՞ւ է այդքան կարևոր քեզ համար:
- Հայրենիքս այն վայրն է, որտեղ ապրել են իմ պապերը, իրենց արյամք սնել հողը՝ հանուն մեր ինքնության, որ մենք՝ նրանց զավակները, չինենք օտարի լծի տակ, ստիպված չլինենք տեսնելու վայրագություններ, որ իրենք են տեսել, որ մենք ապրենք խաղաղ ու սովորենք մեր պատմությունը՝

Հովհան Բաբայան

արքաների կողմից կերտված և պատմիչների կողմից
գրված, որ մնանք քրիստոնյա՝ հանուն կյանքի
ճշմարիտ ուղու և Քրիստոսի, ով խաչվեց մեր
մեղքերի թողության համար, որ սնվենք այնպիսի
դրախտային բարիքներով, ինչպիսին հայոց հողն է
միայն պարզեցում: Ինչպե՞ս չսիրեմ ես այդ
դրախտային օրքանը, որին մեկ բառով Հայաստան
են կոչում: Աշխարհում շատ ազգեր կան, բայց այդ
ազգերից քչերը պետություն ունեն, դրանցից մեկը
մերն է, նոյնիսկ երկուսը: Արցախ, Հայաստան մեկ
ամբողջություն, չքնաղ պետություն,
քրիստոնեություն, հայրենասիրություն,
տաղանդաշատ մարդկանց բազմություն, օդի
թարմություն, ջրի զովություն, բնության
հրաշագեղություն, լեզվի ու գրի կատարելություն, իր
ողջ բնույթով մի մեծ սրբություն:

-Աղելինա՛, շունչ քաշիր: Եթե բոլոր հայերը քո պես
խնաք սիրով սիրեին Հայաստանը, կարծում եմ՝ ամեն
ինչ հրաշալի կլիներ:

-Հավատա՛ շատերն են սիրում, բայց որտեղ որ կան
մոլախտեր, ցորենի հասկերն էլ չեն երևում ու հաց
չեն դառնում:

-Գիտես՝ դու մոռացար դավաճանություն բառը
երկրպագելի խոսքերիդ մեջ:

Սիրո Հայրենիք

-Միայն այն, որ հավատարմություն չասացի, դա
բավական է: Արի՛ ըսդունենք, որ շատ հավատարիմ
հայեր կան, ովքեր մինչև վերջին վայրկյանը
նվիրվում են հայրենիքին:

-Ադե՛լ, մի՛ նեղացիր, բայց որտեղ կա մոլախոտ,
ինքդ էլ ասացիր, որ ցորենը հաց չի դառնա:

-Ժող արմատախիլ անեն բոլոր մոլախոտերը, որ
չկործանեն մի ողջ մարգագետին:

-Ճիշտ ես, ափսոս, որ արմատախիլ անող չկա:

-Լա՛վ, Աբե՛լ, մոռացի՛ր. միևնույն է խոսելը
ամենաչնչինն ու անօգուտն է, որ կարող ենք անել:
Հիմա ավելի լավ է ասես, թե քեզ համար ինչն է
կարևոր:

-Դու, ընտանիքս, ընկերներս:

-Պարզ է, փաստորեն քո բախտը բերել է ընկերների
հարցում:

-Այո՛, շատ կցանկանայի իմանալ, թե քո բախտը
ինչո՞ւ չի բերել ընկերների հարցում:

-Երկար պատմություն է:

-Իսկ ես սիրում եմ քեզ լսել, միայն դու մի՛ զլացիր ու
պատմի՛ր ինձ քո երկար պատմությունը:

Լուիզա Բաբայան

-Մինչև քեզ հանդիպելը ես շատ ընկերներ ունեի ու բոլորին հավասարապես սիրում էի ու վստահում: Ժամանակի ընթացքում այնպես ստացվեց, որ մտերմացա մի աղջկա՝ Եվելինայի հետ: Նրա հետ այնքան էի մտերմացել, որ մսացածի հետ շփումն աստիճանաբար նվազեց: Մենք միշտ օգնում էինք իրար ցանկացած հարցում, ոչինչ իրարից չէինք թաքցնում: Եվելինան խելացի էր, միասին բազմաթիվ դժվարությունների միջով էինք անցնում ու նկատելի արդյունքների հասնում: Թվում էր, թե ոչինչ մեզ չի բաժանի, ու որ դա ամենաիրական ընկերությունն էր:

-Իսկ ի՞նչ եղավ հետո:

-Դե մի օր մեր քոլեզ եկավ Ֆելիքս անունով մի տղա, ում տեսնելուն պես Եվելինան սիրահարվեց: Նա միշտ մեծ ոգևորվածությամբ էր ինձ պատմում Ֆելիքսի հայացքների մասին, կարծում էր, որ Ֆելիքսն էլ իր հանդեպ անտարբեր չի: Ամեն ինչ շատ լավ էր, մինչև պարզվեց, որ Ֆելիքսն ինձ է սիրում: Ես Եվելինային ասել էի, որ զգացմունքներ չունեմ Ֆելիքսի նկատմամբ, բայց նա չէր հավատում: Պատճառն այն էր, որ Ֆելիքսը քոլեզի ամենատաղանդավոր և խելացի տղան էր, և բոլորը նկատում էին նրան, բացի ինձնից: Ու գուցե հենց իմ անտարբերությունն էլ նրա պանծալի ես-ի

Նկատմամբ գրավել էր Ֆելիքսին: Եվելինան ինձ իր երբսից չատացված սիրո մեղավորն էր համարում: Ես հիասթափված էի ու մեղավոր լինելու զգացումով համակված: Ես հանցագործ էի, որովհետև գողացել էի մի աղջկա հերիաթ, որը երբեք էլ չէր գրվելու: Երկար ժամանակ մեկուսացել էի բոլորից, որովհետև չնայած նվիրվածության ու հավատարմության օվկիանոսում կորցրել էի ինձ ու իմ ցանկությունները, ինձ դավաճան էի զգում, ու այդպիսին էին թվում նաև այդպիսինները՝ հակառակ ու չկամեցող : Ես դադարեցի ինձ մեղադրել այնժամ, երբ Եվելինան իր ցածրակարգ քայլով ստիպեց ինձ պարզապես մոռանալ իր մասին:

-Դեմ չե՞ս լինի բացել փակագծերը:

-Ֆելիքսն ինձ միշտ ծաղիկներ էր ուղարկում՝ չնայած այն բանի, որ երբեք դրանք չէի ընդունում: Հերթական անգամ, երբ Ֆելիքսը ծաղիկներ էր դնում դռան դիմաց, Եվելինան նկարել էր Ֆելիքսին ու նկարները ցույց տվել եղբորս՝ Կարենին: Կարենն էլ, տաքարյուն լինելով, վիճել էր Ֆելիքսի հետ: Նա շատ բարկացած էր, քանի որ երկար ժամանակ փնտրում էր այն տղային, ով անդադար դռան դիմաց «Իմ Ադելինային» մակագրություններով ծաղիկներ էր դնում ու անհետանում: Ես չէի ասում Կարենին, որ

Լովիզա Բաբայան

դրանց հեղինակը Ֆելիքսն է, որպեսզի չվիճեն,
բայց...

-Դու ասացիր, որ մտերիմ եք եղել ու օգնել եք իրար,
ուստի ինչպես Լիխտենբերգն է ասում. «Մարդուն
արդարացնելու համար բավական է, որ նա ապրած
լինի այնպես, որ իր առաջնություններով արժանի
լինի իր թերությունների ներմանը»:

-Ես ներել եմ նրան, Աբե՛լ, բայց ինձ չեմ ների, երբ
հավատարմությունս դարձյալ նվիրեմ անարժան
դավաճանի:

-Ադելինա՛, հավատարմությունը վերևից է,
դավաճանությունը՝ ներքեսից, ուստի դու մեկնի՛ր քն
ձեռքն ու բարձրացրո՛ վեր անարժան
դավաճաններին՝ բոլորի համար դառնալով
օրինակելի:

-Աբե՛լ, այս կյանքը առանց այդ էլ լի է
դժվարություններով: Ինչո՞ւ ատել, եթե կարելի է
սիրել, ինչո՞ւ դավաճանել, եթե կարելի է լինել
յուրօրինակ՝ հավատարիմ լինելու բարձր
արժանիքով, ինչո՞ւ ստել, եթե կարելի է ապրել ճիշտ
ու ստելու առիթ չունենալ:

-Ադե՛լ, ես պաշտում եմ քն խոհեմությունը, այն ինձ
զինաթափ է արել:

Սիրո Հայունիք

Աղելինան դարձյալ շիկնեց Արելի
հաճոյախոսությունից:

-Ի դեպ, ասացիր, որ Կարենը տաքարյուն է, բայց ես
նրան նման բնութագիր չեմ տա:

-Ծիշտ ես, հիմա այդպիսին չեմ, այն ժամանակ բանակ
պետք է գնար և չեր ցանկանում մենակ թողնել ինձ:
Մտածում եր, որ զուցե ինձ կնեղացնեն, զուցե իր
կարիքը կունենամ: Այդ մտքերի տեղատարափն եր
նրան տաքարյուն դարձրեմ:

-Քույրը եղբոր պատիվն է, իսկ քո եղբայրն
ամենապատվարժան մարդը,- Աղելինան
խոնարհաբար ժպտաց:

-Ես իսկապես շատ եմ սիրում իմ եղբորը, նա ինձ
համար ամեն ինչ է:

-Կարենն իրոք շատ լավն է, բայց հաճախ ամաչում
եմ նայել նրա աչքերին:

-Ինչո՞ւ:

-Դե նա գնացել է բանակ, իր պարտքը տվել
հայրենիքին, իսկ ես . . .

-Արե՛լ, դու առողջական խնդիրներ ես ունեցել ու
փառք Աստծո, որ հիմա լավ ես: Մի՛ մեղադրիր քեզ,

Հովհան Բաբայան

խնդրում եմ,- փաղաքական ձայնով ասաց
Աղելինան ու գրկեց Արելին:

-Ադ ես չեմ ուզում պարտքի զգացումով հեռանալ
Հայաստանից, նամանավանդ , երբ իմացա, թե
որքան ես սիրում հայրենիքն ու քո շնորհիվ ինքս էլ
սկսեցի սիրել ու գնահատել այն:

-Դու պատրաստվում ես հեռանա՞լ Հայաստանից:

-Հայրս իրեն լավ չի զգում, պետք է գնանք
Ռուսաստան, մինչ կապաքինվի ու կվերադառնանք:

-Ինչո՞ւ ավելի շուտ չէիր ասում:

-Չէի կարծում, որ ժամանակն է, իսկ դու կգա՞ս ինձ
հետ:

-Չէ՛, ների՛ր, իմ ծնողներն էլ այստեղ են, ես էլ նրանց
մենակ թողնել չեմ կարող; Ավելի լավ է ասես, թե ինչ
է պատահել պարոն Աշոտին:

-Ինքն էլ չի հասկանում, մեկ սրտում ծակոցներ ունի,
գլխացավեր, ամեն օր մի բանից բողոքում է:

-Չե՞ք գնացել բժշկի:

-Հայաստանում ստուգվել չի ուզում, ասում է.
«Այստեղ բժշկություն չկա, վիճակս էլ ավելի
կրարդացնեն»:

-Հուսամ ամեն ինչ լավ կլինի:

-Մի՛ տխրի, լա՞վ:

-Ամեն ինչ կարգին է, հայրիկիդ առողջությունը
ավելի կարևոր է, ես կսպասեմ քեզ ու եթե պետք
լինի, մի ամբողջ հավերժություն, միայն եթե
խոստանաս, որ վերադառնալու ես:

-Դու միայն սպասի՛ր ինձ ու խոստանում եմ, որ ինչ էլ
լինի, կվերադառնամ:

-Լա՞վ, վերջ, չենք հուզվում: Աբե՛լ, ինչ կարծիքի ես,
մի փոքր չշրջե՞նք:

-Հիանալի գաղափար, ես միանշանակ համամիտ եմ:
Որտե՞ղ ես ուզում գնանք:

-Հաղարծին՝ Սր. Աստվածածին եկեղեցի, կաղոթենք,
ու բացի դա, այնտեղ մի ծառ կա, որի փշակով եթե
կարողանաս անցնել, ապա երազանքդ կկատարվի:

-Դե ուրեմն գնացինք մեր երազանքի հետևից,-
Ժպտալով ասաց Աբելն ու գնացին:

Մեքենայի մեջ Աբելը հարցրեց.

-Դու խելացի աղջիկ ես, Աբե՛լ, ես էլ ուզում եմ
իմանալ, թե ինչու՞ է վայրը Հաղարծին կոչվում:

Լոփա Բաբայան

-ԱՇԽ, ուրեմն այսպես: Երբ կատարել են վանքի օծման արարողությունը, այդ ժամանակ գլխավոր եկեղեցու գմբեթի վրա մի արձիվ է ճախրել, և դրանով վանքը հայտնի է դարձել որպես խաղացող արձվի վանք : «Հաղ» նշանակում է խաղ, իսկ «արձի»՝ արձիվ:

-Օ՛, ապրե՞ս, իսկ այդ երազանքի ծառի մասին ի՞նչ կասես:

-Դե այդ ծառը՝ ընկուզենին, 700 տարեկան է: Ավանդությունն ասում է, որ վանքը կառուցող վարպետը սովորություն է ունեցել՝ կառուցած շնչերի կողքին ընկուզենի տնկել: Ընկուզենու կողքին էլ գտնվում է մի խաչքար, որը տարբերվում է մյուս բոլոր խաչքարերից: Ի տարբերություն մյուս խաչքաների՝ խաչի թևերը չեն ավարտվում, այլ շարունակվում են՝ ստեղծելով կրկնակի խաչ, որը խորհրդանշում է երկրորդ կյանքը:

-Հպարտանում եմ քեզնով. քայլող հանրագիտարան ես : Մտածե՞լ ես՝ ինչ երազանք ես պահելու:

-Ըին, իսկ դու՞:

-Մտածել եմ,-Ժպտալով ու Աղելինայի ծեռքը բոնելով՝ ասաց Աբելը:

Սիրո Հայրենիք

Երբ հասան Հաղարծին, գնացին Սր. Աստվածածին եկեղեցի: Եկեղեցում աղոթեցին, Աստծուց օրինություն ստացան ու շնորհակալ եղան այն ամենի համար, ինչ Աստված տվել է իրենց: Հետո գնացին ընկույզենու մոտ: Աղելինան երազանք պահեց ու հեշտությամբ անցավ ծառի փշակի միջով: Հետո երազանք պահեց ու անցավ նաև Աբելը:

-Դե՛ ինչ, հուսամ՝ մեր երազանքը կկատարվի՝ մենք միշտ միասին կլինենք, Աստված էլ աչքը մեր վրա քաղցր կպահի:

-Էլ որտեղ կկամենա գնալ իմ հայուիին, գնա՞նք Գոշավանք, Պարզ լիճ: Ի՞նչ կասես:

-Միսիթար Գոշը երազում տեսնում է Աստծուն, ով զգուշացնում է, որ յոթ տարի շարունակ պտղատու տարիներ են սպասվում, որոնց հաջորդելու է երկարատև երաշտը: Տերը հորդորում է Գոշին, որ վանքերում կառուցեն ամբարներ և ծայրից ծայր պահեստները լցնեն հացահատիկով: Երաշտի սկսելուն պես Միսիթար Գոշը վերցնում է մի մեծ զամբյուղ՝ «գուշ», լցնում է այն հացահատիկով, բաժանում մարդկանց և սովից փրկում նրանց: Ակզբնապես վանքը անվանվել է Նոր Գետիկ, սակայն Միսիթար Գոշի մահվանից հետո վերանվանվել է Գոշավանք:

Լովիզա Բաբայան

-Սա նշանակում է, որ համաձայն ես,- ծիծաղեց
Աքելը:

-Դե իհարկե,- պատասխանեց Ադելինան, ու գնացին
մեքենայի մոտ: Աքելը դուռը բաց արեց, որպեսզի
Ադելինան նստի, բայց հանկարծ նկատեցին, թե
ինչպես է մի տղա բռնել աղջկա ձեռքն ու քաշքում
նրան:

-Ադելինա', դեմ չես լինի, չէ', որ միջամտեմ:

-Չէ', իհարկե, գնա', Աքե՛լ, ես քեզ մեքենայի մեջ
կսպասեմ :

Աքելը մոտեցավ նրանց.

-Ըսկե՛րս, Ե՛կ, առանձին զրուցենք:

-Գնա՞նք,- Աքելն ու երիտասարդը գնացին մի փոքր
ավելի հեռու:

-Ի՞նչպես քեզ դիմեմ:

-Նարեկ է անունս:

-Իմ անունն էլ Աքել է: Նարե՛կ, ես չգիտեմ, թե ինչ է
պատահել ձեր միջև, բայց ճիշտ չէ աղջկան կոպտել:

-Աքե՛լ ջան, նա իրեն սխալ է պահել:

Սիրո Հայրենիք

-Մեզնից ոչ ոք անսխալ չէ, բայց ուրիշների սխալները ի ցույց դնելով ու փաստելով, որ մենք նման սխալ չենք գործել, ինքներս ավելի լավը չենք դառնում: Եթե դիմացինը սխալ բան է անում, կարելի է փորձել բացատրել նրան, իսկ մինչև բացատրելը նախ ինքներս մեր մեջ պետք է վերլուծենք, գուցե նրա արածը սխալ չէ, գուցե պարզապես նրա տեսակետը հարցի շուրջ այլ է:

-Ես շուտ եմ բորբոքվում, ու նա դա գիտի, թող իրեն այնպես պահի, որ խոսելու ու ինչ-որ բաներ բացատրելու կարիք չինչի:

-Տեսնում ես, դու տաքարյուն ես, բայց դեռ նրան ես մեղադրում: Նա կին է, կանայք ուշադրության ու սիրո պակաս միշտ էլ ունենում են, թեկուզ եթե ամբողջ օրը կողքին լինեն, նա կարոտելու է քեզ: Ընկերուիիս մեքենայի մեջ է, բայց վստահ եմ, հիմա կարոտից խեղդվում է:

-Իսկ ես վստահ եմ, որ ընկերուիիս իմ բացակայությունից ավելի շատ ուրախանում է, բան կարոտից խեղդվում:

-Ընկե՛րս, դա քո սառը պահվածքից է, միշտ հիշի՛ր, որ տղան պիտի արտաքինից կոպիտ լինի, բայց վարմունքն աղջկա նկատմամբ պետք է լինի նրբագույն: Փորձի՛ր նրան ավելի շատ սիրել, մի

Լովիզա Բաբայան

կողմ դի՛ր հպարտությունդ, կնոջը սիրելը
տղամարդու համար վսեմություն պետք է լինի, այլ ոչ
թե թուլամորթություն:

-Ընորհակալ եմ, Աբե՛լ, հիմա ինձ ավելի լավ եմ
զգում:

Աբելն ու Նարեկը գրկեցին միմյանց ու
հաջողություն մաղթեցին:

Աբելը գնաց խանութ, ծաղիկներ գնեց Աղելինայի
համար ու վերադարձավ.

-Այս ծաղիկները քեզ, Աղելի 'ն, ճիշտ է քո
գեղեցկության հետ անզոր են համեմատվել, բայց
կարծում եմ՝ դրանք ևս գեղեցիկ են:

-Հրամանատա՞ր, պետք է գեկուցեմ, որ ի հեճուկս
ձեր բոլոր թշնամիների, դուք կարողանում եք
գրավել իմ սիրտը:

-Հիանալի է,- ասաց Աբելն ու սկսեցին ծիծաղել,-քեզ
գտնողը պետք է շնորհակալ լինի իրեն բաժին
հասած գոյության համար, և ես ցավում եմ
փնտրողների համար, որովհետև քեզ ես արդեն
գտել եմ:

-Աբե՛լ, զիտես՝ քեզ հանդիպելուց հետո ես հասկացել
եմ կյանքի օրինաչափությունը՝ մենք ծնվում ենք, որ

սիրենք ու սիրում ենք, որ ապրենք: Հա, ի դեպ, ի՞նչ
պատահեց այն զույգի հետ, ամեն ինչ կարգի՞ն է:

-Իհարկե, անհո՞գ եղիք:

Աղելինան ու Աբելը միասին գնացին Գոշ լիճ,
Պարզ լիճ, որոնք համարվում են սողանքային
ծագման լճեր:

Երեկոյան Աբելը Աղելինային տուն ուղեկցեց:
Աղելինան, երբ մտավ տուն, շփոթված էր, խառնվել
էին բոլոր հույզերը՝ ուրախություն, երջանկություն,
անհանգստություն: Լինում է չէ՛ երբեմն, որ չենք
ուզում ոչ մի կերպ հաշտվել մեր լսածի հետ,
որովհետև հաճախ ենք ապրել այն գիտակցումով, թե
կյանքում ամեն բան հեշտ է: Ու երբ գալիս է
դժվարությունները հաղթահարելու պահը, դրանք
ավելի բարդ են թվում, քան իրականում կան: Մեր
գիտակցությունն ու աշխարհընկալման
տեսակետներն են ստեղծում մեզ համար արտաքին
աշխարհը: Մարդիկ, իրադարձությունները չեն
փոխվում, բայց փոխելով մեր մտածելակերպը՝ մենք
կարող ենք ապրելն ավելի դյուրին դարձնել: Ինչևէ,
Աղելինան գնաց խոհանոց.

-Օ՛, աղջի՛կս, եկա՛ր, ապա պատմի՛ր՝ ինչպես
անցավ օրդ,-հարցրեց Գոհարը:

Լովիզա Բաբայան

- Դե այցելեցինք Սևան, Հաղարծին, Գոշավանք,
Պարզ լիճ, Գոշ լիճ, հետո ուղղակի շրջեցինք
մեքենայով, մի խոսքով, ամեն ինչ հրաշալի էր:
- Շա՞տ լավ է, ապրի Արեւս, Ես միշտ էլ հիացել եմ
նրանով:

- Ես էլ,-մտամոլոր ասաց Աղելինան:
- Ինչ-որ քան այն չէ՝ Աղելինա:
- Արելի հայրը վատառողջ է, մի քանի շաբաթից
գնալու են Ռուսաստան:
- Վա՛յ, բայց ի՞նչ է պատահել:
- Հաճախակի գլխացավեր, սրտում ծակոցներ:
- Աստված տա բարով գնան-գան:

- Ես վստահ եմ՝ ամեն ինչ շատ լավ կլինի: Լա՛վ,
մա՛մ, հոգնած եմ, գնամ, քնեմ, առավոտյան
կխոսենք:

Աղելինան պառկել էր անկողնում, բայց քնել չէր
կարողանում: Չէ՛ որ գիշերը հենց այն հարմար կամ
անհարմար պահն է, երբ արթնանում են
հիշողությունները և հանգիստ չեն տալիս
մտածմունքները: Տեսնես ո՞վքեր են
պատասխանատու մեր աչքերի համար, որոնք բաց

Սիրո Հայրենիք

Են ամբողջ գիշեր: Ովքե՞ր են մեղավոր կիսատ
մնացած երազների համար, որոնք այդպես էլ
չկարողացանք շարունակել: Ովքե՞ր են մեր կյանքի,
սիրո մասին երգեր գրողները, և ո՞վ է թույլ տվել
նրանց հրապարակել դրանք: Ամեն ինչ այնքան բարդ
է կամ էլ այնքան պարզ, որ անորոշության
խաչմերուկում ընտրել ենք դժվարի ճանապարհը:

Աղելինայի հեռախոսին զանգ եկավ, տեսնես ո՞վ
էր այդ ուշ ժամին. Արելն էր.

-Աղելինա՝, վաղը մեկնում ենք Ռուսաստան:

-Ի՞նչ, ոնց թե, ախր ասացիր, որ մի քանի շաբաթ
հետո եք մեկնելու:

Հեռախոսն անջատվեց, ու Աղելինան լուռ նստեց:
Արելի հետ մտքում երկար վիճելուց հետո քնել էր:
Առավոտյան արթնացավ Արելի զանգից:
Խոսակցությունն ավարտելուց հետո Աղելինան
արագ հագնվեց ու դուրս եկավ տնից: Բակում նրան
սպասում էր Արելը:

-Շատ գեղեցիկ ես,- ասաց Արելը:

-Ըսրիակալ եմ, բայց ավելի լավ է հիմա խոսես:

-Ի՞նչ խոսեմ, պապան երեկ ասաց, որ իրեն շատ
վատ է զգում, ու այսօր պետք է գնանք:

Լուիզա Բաբայան

-Ե՞րբ եք մեկնում:

-Մի քանի ժամից:

-Արե՛լ, կկարոտեմ քեզ շատ, դեռ չես գնացել, բայց ես չեմ համբերում, թե երբ ես գալու ու քեզ ամուր գրկեմ, որ բույրդ զգամ, այնքա՞ն սիրելի, այնքա՞ն հարազատ, - արցունքն աչքերին ասաց Աղելինան:

-Հսարավորինս շուտ, լսո՞մ ես, դու միայն սպասիր, հանկարծ լաց չլինես: Միշտ ժպտա, որովհետև քո ժպիտն ապրեցնող է: Ես քեզ հաճախ կգրեմ, դու կենտրոնացում քննությունների վրա դիր, լա՞վ:

-Լա՞վ:

-Աղե՛լ, սա վերցրո՞ւ:

-Սա ի՞նչ է:

-Հիշո՞մ ես, որ ասում էի քեզ համար հիշողության օրագիր եմ պահելու:

-Զասես, որ սա քո հիշողության օրագիրն է:

-Դե նման մի բան, ինչ գրել եմ քո մասին է:

Հասկանում ես՝ մենք ունակ չենք կյանքի բոլոր պահերը հիշելու, իսկ ես ցանկանում եմ քո մասին ամեն բան հիշել: Ի դեպ, երբ գնաս տուն, իսկույն չկարդաս:

-Իսկ ե՞րբ կարդամ:

-Կարդա այն ժամանակ, երբ ինձ անտանելի
կկարոտես:

-Եղա՛վ, -ասաց Արելինան, ու իրար ամուր գրկելով՝
իրաժեշտ տվեցին:

Հրաժեշտից հետո ամեն ինչ եղավ այնպես, ինչպես
Արելն էր ասել: Արելինան զբաղված էր
ըննություններով և օրագիրը պահում էր այն պահերի
համար, երբ անտանելի կկարոտեր Արելին:

Արելի գնալուց հետո մի քանի օր էր անցել, երբ
սեպտեմբերի 27-ի առավոտյան Արելինան
արթնացավ ու տեղը գտնել չկարողացավ, որովհետև
բոլորի շուրբերից, հեռուստատեսության ալիքներից
հնչում էր «Պատերազմ» բառը: Աղրբեջանական
կողմը անցել էր հարձակման: Կրակոցների ձայնից
արթնացել էր քնած Արցախն ու թնդում էր հողը
հայոց, լալիս էին մայրերը հերոսածին: Նենգ ու
բարբարոս թշնամին դարձյալ փորձում էր ծնկի բերել
հային: Չե՛, չէին կերտել դասը դարերի, որ թեկուզ
սրի դեմ փայտով, զենքի տեղ բազկով, թեկուզ և դեմ
ամբողջ աշխարհին, բայց կովի կելնենք՝ հանուն մեր
հողի՝ սուրբ հայրենիքի:

Արելինան վերցրեց հեռախոսն ու գրեց Արելին.

Լուիզա Բաբայան

-Արե՛լ, պատերազմ է:

-Գիտեմ:

-Բոլորը խառնված են, ասում են՝ վիճակը շատ վատ
է:

-Հանգստացի՛ր, Արե՛լ, ամեն ինչ լավ կլինի,
խուճապը միայն կխանգարի:

-Չգիտեմ, տեսնենք ինչ կլինի, հայրդ ո՞նց է:

-Միշտ էլ լավ է եղել:

-Այսինքն:

-Դե՛ ...

-Հա՛, դե պապադ լավ կապեր ոնսի, երևի վաղուց էր
իմացել այս մասին, դրա համար էլ գնացիք երկրից:

-Այդպես չի, Արելինա՛:

-Դու կարող էիր ուղակի ասել, թե որն է իրական
շարժանիթը Հայաստանը լքելու համար:

-Ես արդեն մեկ անգամ ասացի, որ սխալ ես
մտածում, իսկ մնացածը քո գործն է:

-Ես քեզ կսիրեմ հայրենիքից շատ, եթե դու սիրես
հայրենիքն իմ պես, ավելի սիրես, քան ինձ ես սիրում
...

Սիրո Հայրենիք

Աղելինան նետեց հեռախոսն ու սկսեց լաց լինել:
Սպասում էր Արելի հաղորդագրությանը, կարծում էր՝
մի սփոփող բան կգրի, ամեն ինչ կկարգավորվի,
բայց . . .

Հետո հասկացավ, որ սպասելն իզուր է ու ավելի
լավ է մի օգտակար գործով զբաղվի:

Սահմանին վիճակը գնալով էլ ավելի էր
վատանում: Արցախահայությանը տուն, սնունդ,
հագուստ էր անհրաժեշտ, իսկ զինվորներին՝ ջուր,
ծածկոցներ, ուստի Աղելինան որոշեց
զբաղվել կամավորական աշխատանքներով:

Առավոտյան արթնանում էր, ուտելիք
պատրաստում իր թիմի համար և մինչև ուշ գիշեր
աշխատում էին, օգնում արցախցիներին, քողարկիչ
ցանցեր կարում և ուղարկում սահման:

Մի օր, երբ Աղելինան դարձյալ պատրաստվում էր
դուրս գալ տանից, նրա եղբայրը՝ Կարենը, հավաքեց
բոլորին և ասաց.

-Ես կամավորագրվել եմ և այժմ պատրաստվում եմ
մեկնել ճակատ:

-Ի՞նչ, ի՞նչեր ես խոսում,- լսվում էր բոլորի
անհանգստացած ձայները:

Լովիզա Բաբայան

-Մի՛ զարմացեք, ես գնում եմ՝ իմ հայրենիքը
պաշտպանելու:

-Բալե՛ս, մի՛ գնա, ցավդ տանեմ, մենք լավ
առողջություն չունենք, քրոջ անտեր չքողնես:

-Մա՛մ, ես չեմ գնում մեռնելու, գնում եմ սահմանը
պահելու, ինչպես որ մնացած իսկական տղերքը:

-Այ ես քո հայրենասեր ջանին մեռնեմ, դու չգիտես
հիմա ինչ վիճակ է, այնտեղ հրացանով չեն կովում,
անողորմ գենքեր են օգտագործում:

-Պա՛պ ջան, հանգի՛ստ եղիր, մա՛մ ջան, քո՛րս, դուք
էլ աղոթեք ու հավատացեք, որ հետ կգամ:
Փոխանակ բարի ճանապարհ մաղթեք, ինչեր եք
խոսում, ամո՞թ է:

-Կա՛ր, ես քեզ կյանքիցս շատ եմ սիրում,- ասաց
Աղելինան ու լաց լինելով՝ գրկեց եղբորը: Կարենը
սրբեց Աղելինայի արցունքներն ու ասաց.

-Ես էլ քեզ եմ սիրում, Աղելինա՛, խնդրում եմ, մի՛շտ
հիշիր, որ դու աշխարհի ամենաուժեղ, գեղեցիկ ու
խելացի աղջիկն ես:

Հրաժեշտի պահն ամենասարսափելին է,
նամանավանդ, երբ հրաժեշտ ես տալիս քեզ համար
թանկ մարդկանց: Ամենասպանիչն է այն հրաժեշտը,

Սիրո Հայրենիք

որից հետո վերադարձ կարող է չլինել: Վախենում ես, որ կայրվեն ետ դարձի բոլոր ճանապարհներն ու կմնաս մենակ՝ կյանքի բարդ լարիրինթոսում: Կյանքի շափման միավորը ժամանակն է, և ամեն բան լինում է իր ժամանակին, քանի որ դատապարտված ենք ժամանակի թելադրանքով առաջ շարժվելու:

Կարենին ճանապարհելուց հետո Արելինան վերցրեց հեռախոսն ու գրեց Արելին, որ Կարենը կամավորագրվել է: Արելը, տեսնելով հաղորդագրությունը, ոչինչ չպատասխանեց, ինչը Արելինային ավելի ցավեցրեց: Միևնույն է, նա շիուսահատվեց, չէ՞ որ ժամեր առաջ եղբայրը նրան «աշխարհի ամենաուժեղ աղջիկ» էր անվանել: Արելինան շարունակում էր կամավորական աշխատանքները, փորձում էր մոռանալ Արելին, բայց մենք հակված ենք հիշելու նրան, ում ցանկանում ենք մոռանալ: Այս ինչպէ՞ս մոռանաս նրան, ում խենքի պես ուժգին ես սիրել, ում սրտիդ չափով, այդ չափից էլ վեր սեր ես խոստացել . . .

Գիշերները Արելինան չէր քնում, որովհետև աղոթում էր Կարենի, սահմանին կանգնած տղաների ու հայ ժողովրդի համար. «Տե՛ր իմ, օրինի՛ր իմ ժողովրդին, հանգի՛ստ տուր որդեկորույս մայրերին ու պաշտպանի՛ր մեր մյուս զինվորներին»:

Հովհան Բաբայան

Հրանոթի ձայները ականջ էին խլացնում, և հանկարծ ամեն ինչ անէացավ: Բարձրահասակ էր, ո՞վ էր նա, մեջքով էր կանգնած: Զինվորը շրջվեց ու ժպտաց. Արելն էր: Այնքան գեղեցիկ էր զինվորական համազգեստով, կարծես հազին միօրինակ հագուստ էր՝ իր համար կարված: Տեսարանը խամբեց, Արելն անհետացավ, բոլորը գոռում էին. քառ էր:

-Արե՛լ,-գոռաց Արելինան ու արթնացավ,-այս ի՞նչ երազ էր, որտե՛ղ ես կորել: Ես հպարտությունս մի կողմ եմ դրել և քեզ հետ խոսել եմ ուզում, իսկ դու անհասանելի ես, չեմ հասկանում պատճառը: Գուցե նեղացրե՛լ եմ նրան իմ խոսքերով: Չէ՛, Արելը նման թերև վիճաբանության պատճառով մեր սիրո գրքի էջերը չեր սևագրի:

Հինգ րոպե լուր նստելուց հետո Արելինան վերցրեց Արելի տված օրագիրն ու մի բանաստեղծություն գրեց:

Բաղձալի տեսիլք

Այս գիշեր մենակ էի ես,
Քո մասին չի մտածում,
Հանկարծ աչքերս փակվեց
Ու քննեցի ես իսկոյն:

Երազումս իմ դիմաց
Մի վեհ զինվոր էր կանգնած,
Քո պատկերը ուներ նա,
Քո պատկերն անմոռաց:

Գեղեցիկ էիր, հմայիչ,
Բարձրահասակ ու խոհուն
Եվ քո աչքերով անբիծ
Ինձ գերում էիր, կախարդում:

Լացս հազիվ էի զսպում,
Քեզ զրկել էի ես ուզում,
Սակայն աչքերս բացվեց
Կորցրեցի քեզ կարծես:

Լույսը խավարն էր ցրում,
Ես լալիս էի, հեկեկում
Ու կորցրած պատկերդ
Նորից գտնել էի փորձում:

Լուիզա Բաբայան

Երազներում իմ գունեղ
Քեզ փնտրում էի, քեզ կանչում,
Բայց դու կորել էիր անհետ,
Իմ մասին չէիր էլ հիշում:

Ու զիշերն այդ սիրահեղձ,
Քո մեղմ ձայնով պարուրվեց,
Զայնդ ականջս շոյեց,
Ու ժայիտ ինձ պարզեց.

-Ինձ մի՛ հիշիր, սիրելի՛ս,
Չես տեսնելու էլ երբեք,
Պատերազմ եմ գնում ես,
Երկրիդ պաշտպանն եմ հավետ:

Ադելինան փակեց օրագիրն ու արցունքներն
աչքերին՝ ասաց.

-Հուսամ՝ Աբելն այն կկարդա:

Երբ գրեց իր տարօրինակ երազի մասին, փոքր -
ինչ հանդարտվեցին հոյզերը:

Հաջորդ օրը Ադելինան սովորականի պես
զբաղված էր իր դասերով և հանկարծ անծանոթ
համարից զանգ եկավ: Համարը ոռուսական էր, և

Սիրո Հայուենիք

առանց երկար մտածելու՝ պատասխանեց՝
կարծելով, թե Աբելն է.

-Այո՛, Աբել՛, դու՛ ես:

-Ո՛չ, Աբելի մայրն է՝ Արաքսյան:

-Լուս եմ, տիկի՞ն Արաքսյա:

-Աղե՛լ ջան, ես քո օգնության կարիքն ունեմ: Աբելը
եկել է Հայաստան, ու նրանից ոչ մի տեղեկություն
չունեմք: Մի քանի օր առաջ վիճեց հոր հետ, տումս
գնեց ու վերադարձավ Հայաստան: Կարծեցի՝ դու
կիմանաս, դրա համար քեզ եմ զանգահարել, ի դեպ,
քո համարն էլ մի կերպ եմ գտել. քարտս փոխել էի:

-Ի՞նչ, Աբելը Հայաստանու՞մ է:

-Փաստորեն դու էլ չես տեսել նրան:

-Չէ՛, ես գրեթե մեկ շաբաթ առհասարակ իր հետ չեմ
խոսել, ավելի ճիշտ, նա չէր պատասխանում:

-Ու՛ֆ, Աղե՛լ ջան, հարազատներից ու ընկերներից ոչ
ոք նրա մասին տեղեկություն չունի:

-Հանգի՞ստ եղեք, տիկի՞ն Արաքս, ես մի քան կանեմ,
բայց կարելի՞ է իմանալ, թե ինչի պատճառով են
վիճել:

Լովիզա Բաբայան

-Ե՛, Աղե՛լ: Մի գիշեր Աշոտին զանգեց ընկերներից մեկն ու ասաց, որ պատերազմի սպառնալիք կա, ու չեն իմանա, թե մոտակա օրերս ինչ կկատարվի:
Աբելն էլ մեր մինուճար որդին է, և մենք շատ ենք անհանգստանում նրա համար: Վերջերս էլ հաճախ էր հայրենիքի կարևորության մասին խոսում,
վախեցանք, որ կարող է կամավորագրվել, ու որոշեցինք Աբելին մի որոշ ժամանակ դուրս բերել երկրից՝ վտանգից խուսափելու համար: Որպես պատճառ՝ ընտրեցինք Աշոտի առողջական վատ վիճակը, ու երբ իմացանք, որ պատերազմը մոտ է, բեմադրություն կազմակերպեցինք ու շտապ եկանք Ռուսաստան: Մեր գալուց մի քանի օր անց պատերազմ սկսվեց, ու մեր զրույցը լսելով՝ Աբելն ամեն ինչ հասկացավ:

-Այսինքն Աբելն ինձ չի՝ ստել, - համարյա գոռալով Արաքսյայի վրա՝ ասաց Աղելինան:

-Ի՞նչ ստել, Աղելինա՛, ինչ-որ քան կա՛, որ չես ասում:

-Ներեցե՛ք, տիկին Արաքս,- ասաց Աղելինան ու հեռախոսն անջատեց:

Որտե՛ղ կարող էր գտնել Աբելին: Երկար մտածելուց հետո Աղելինան որոշեց գնալ Աբելի

Սիրո Հայրենիք

մտերիմ ընկերոց՝ Գևորգի մոտ: Մի ժամ անց նրանք հանդիպեցին մոտակա այգիներից մեկում:

-Ա՛դ, ինչոր բանա եղել, որ տագնապահար զանգեցիր, ճիշտ ասած ես ի էի քեզ հետ խոսել ուզում:

-Ի՞նչ պիտի ասեիր:

-Կովե՛լ եք Արելի հետ:

-Սա ընդամենը մի փոքր վիճաբանություն էր, որի մեղավորը ես եմ, առանց եղելությունն իմանալու՝ սխալ բաներ եմ խոսել: Որտեղի՞ց գիտես, հանդիպե՛լ ես Արելին:

-Այո՛, հանդիպել եմ:

-Արելի մայրն ասաց, որ զանգել է բոլորին, ու ոչ ոք նորություն չունի:

-Դու երևի մոռանում ես, որ ես հասարակ վարորդի որդի եմ, ու նրանք միշտ էլ ինձ Արելի ընկերը չեն համարել:

-Պարզ է, լա՛վ, Գև, խնդրում եմ, արա՛գ խոսիր:

-Երկու օր առաջ եմ խոսել հետը, ասաց, որ ծնողները ստել են ու տարել Ծուսաստան, որպեսզի

Լովիզա Բաբայան

պատերազմին չմասնակցի, դու էլ իրեն մեղադրել ես
փախուստի մեջ:

-Աստվա՛ծ իմ,- լաց եղավ Ադելինան:

-Ես շեմ իմացել, որ նրան ստել են, որ Հայաստանում
է, երբ իմացա, շտապեցի քեզ մոտ:

-Աքելն ասաց, որ ուզում է մի քանի օր մենակ մնա,
հանգստանա, ի մի բերի մտքերը: Ես էլ չհամառեցի
ու խոստացա չանհանգստացնել:

-Զանգի 'ր նրան, խնդրու'մ եմ:

-Լա՛վ, եթե պնդում ես,- ասաց Գևորգն ու զանգեց
Արելին. հետախոսն անջատված էր:

-Ոչինչ, մի փոքր ուշ կրկին կփորձենք:

-Աքելի հետ հանդիպման ժամանակ նրա մեջ
փոփոխություն նկատեցի, իսկույն հասկացա, որ քն
ձեռքի գործն է:

-Ի՞նչի մասին ես խոսում:

-Մի տեսակ հայրենասիրություն էր սկսել եռալ
երակների մեջ:

Ադելինան ժպտաց՝ հիշելով իր և Աքելի զրոյցը
Սևանում:

Սիրո Հայրենիք

-Այս, քիչ էր մսում մոռանայի: Այս նամակը Աբելը խնդրել էր, որ երեք օր անց քեզ փոխանցեմ, հիմա ճիշտ ժամանակն է:

-Փաստորեն Աբելը հաշվարկել էր քայլերի հաջորդականությունը, վստահ էր, որ ուշ թե շուտ իմանալու եմ իր՝ Հայաստանում գտնվելու մասին:

-Դեմ չես, եթե հենց հիմա կարդամ,- Աղելինան ազահարար խլեց Գևորգի ծեռքից ծրարն ու սկսեց կարդալ. «Ի՞մ Աղելինս, եթե դու կարդում ես այս տողերը, վստահ եմ, որ գիտես ամեն բան: Ես չեմ փախել եսասերի նման, որ փրկեմ կյանքս ու խուսափեմ հայրենիքին պարտք տալուց, այն պաշտպանելուց: Դու պետք է իմանաս, որ իմ համար կյանքիցս թանկ ես, որ իմ համար կյանքից թանկ է այն ամենը, ինչ քո համար սիրելի է, որովհետև դու այն մեկն ես, ով եկավ ու թելադրեց ինձ սիրո բանաձեռ, հավատաց, սիրեց ինձ՝ բազմակողմանի թերավորիս: Ասում են՝ մարդիկ կատարյալ չեն լինում, դա ասողները քեզ չեն հանդիպել: Այս՝, իսկապես, դու կատարյալ ես քո բոլոր թերություններով, որոնք այդպես էլ չգտա քո մեջ, թեև այդքան խոսում ես դրանց մասին:

Հենց քեզ համար, հենց իմ մեջ արթնացած հայի պատվի համար, Կարենի համար ես հիմա դիմում եմ: Մենք կվերականգնենք

Լովիզա Բաբայան

արդարությունն ու կամրապնդենք մեր երկրի
սահմանները: Մաքրի՛ր արցունքներդ, դրանք շատ
թանկ են, ուրախ օրերի համար պահիր: Ես գիտեմ,
որ քո հավատը մեծ է, դու շարունակիր աղոթել
բոլորիս համար, իմ Աղելինա՝: Ծնողներիս կասես,
որ ներեն կոպիտ խոսքերիս համար:

**Հ.Գ. Հոգ տար քո արտասովոր գեղեցիկ սրտի
մասին»:**

-Աղելինա, ի՞նչ եղավ, խոսի՛ր:

-Երազս . . .

-Ի՞նչ երազ:

-Սա երազ չէր, ես ուղղակի զգում էի, զգում եմ
Արելին մարմնիս ամեն մի թշիջով,- Աղելինան
հուսահատ լալիս էր:

-Աղելինա՝, խոսի՛ր կամ էլ տու՛ր կարդամ:

-Արելը, Արելը դիրքերում է:

-Նա չի ծառայել, ի՞նչ գործ ունի դիրքերում, խելքը
որտե՞ղ է, չեմ հասկանում:

-Ես հավատում եմ, նրա հետ ամեն ինչ լավ կլինի,
նա կվերադառնա: Ես հպարտանում եմ նրանով, մեր
միջև եղած սիրով:

Սիրո Հայրենիք

-Աղելինա՛, չեմ ուզում կոտրել քեզ, բայց սա հերիաթ չէ:

-Սա ավելին է, քան պարզապես հերիաթ, ես վստահ եմ, որ մեր սերը կհաղթի: Գիտես՝ մի պահ կարծում էի, որ ուղղակի հոգնել է ինձնից և նրան պատճառ էր պետք հեռանալու համար, մինչդեռ նա գնացել է կորիվ՝ հանուն մեզ բոլորիս, հանուն իմ հայրենիքի: Երկրում՝ պատերազմ, սրտում՝ պատերազմ, ամեն ինչ կտայի, միայն թե գեթ մի պահ Արելին տեսնեի, զրկեի, ներողություն խնդրեի անտեղի ասված խոսքերիս համար:

Երեկոյան Աղելինան գնաց տոն ու ծնողներին պատմեց ամեն ինչ:

-Շատ սխալ են արել, հասկանում եմ՝ ծնող են, բայց դա արդարացում չի: Ոչ ոք էլ իր երեխայի մահը չի ուզում, բայց որ բոլորս այդպես մտածենք, էլ հայրենիքի տեր չենք լինի, -վրդովված ասաց Աղելինայի հայրը՝ Գարեգինը:

Ծնողները խոսում էին, իսկ Աղելինան խորասուզվել էր իր և Արելի հիշողությունների մեջ և հանկարծ տեղից վեր թռավ ու գնաց սենյակ, պահարանից հանեց Արելի տված օրագիրն ու սկսեց կարդալ. «Միշտ մտածել եմ, որ եթե երկու հոգու ճակատագրերը վիճակված են իրար, ապա վաղ թե

Լովիզա Բաբայան

ուշ նրանք հանդիպելու են, թեկուզ
ամենաանսպասելի ծևով: Ու նա վիճակվեց ինձ, և
մենք հանդիպեցինք իրար: Աղջիկ, որ իր հասարակ
պարզությամբ ամենայուրահատուկն էր բոլորի մեջ,
որ գրքի տող էր՝ մուզով ընդգծված, ուր ասվում
է. «Սիրել, սիրվել, հավերժաբար ու անսահման»:

Ու գուցե մի օր իմ հպարտ հոգին
Քեզ սիրել թռղնի ու էլ չամաչի:
Ու գուցե մի օր ես-դ պանծալի
Ինձ ներել փորձի ու չհառաչի:
Ու գուցե մի օր նայենք նոյն կետին,
Քայլելու համար ընտրենք նոյն ուղին:
Ու գուցե մի օր, նոյն իղձն ունենանք,
Նոյն ցավը կիսենք ու խինդով լցվենք,
Միրով տողորվենք, անբաժան լինենք:
Երանի՝ կյանքում օրն այդ չուշանա . . .

Իմ բախտը քերել է ու սիրահարվել եմ խելագարի
Աման՝ կորցնելով սեփական ես-ս, և դա լավագույնն
էր, որ կարող էր պատահել ինձ հետ: Ու գնալով
սիրուն ընդառաջ՝ հասկացա, որ այն ոչ միայն քեզ
դիմացինի մեջ վերագտնելու, այև քեզ նրա մեջ
կորցնելու զգացումն է: Սերն այն է, երբ չափից դուրս
անըմբռնելի ձևով սիրում ես նրա սիրտը, որովհետև
այն գիտի՝ ինչպես քեզ սիրել:

Սիրո Օվկիանոս

Ինչո՞ւ քեզ տեսա ու սիրտս խոցվեց,
Մի հավերժական սիրով այն պատվեց,
Իմ քարե սիրտը հեքիաթով լցվեց,
Դա քո ժայիտն էր, որ ինձ տապալեց:

Քո անմեղ սիրուց կուրացել եմ ես,
Չգիտես՝ ինչն է փոխվել աշխարհում,
Բայց միևնույնն է, դեռ քեզ եմ սիրում,
Ես քեզ եմ սիրում, կսիրեմ հավետ:

Տիեզերքն անգամ կունենա մի կետ,
Որտեղ ամեն ինչ կավարտվի գուցե,
Բայց ոչ քո սերը, այն ինձ շատ փոխեց,
Անսահման հույսով, կարոտով լցրեց:

Քո էության մեջ մի անհուն քան կա,
Բայց այն, բնավ, տիեզերքը չէ,
Դա օվկիանոսն է, քո հոգու խորքում,
Որն արտացոլվում է քո ջինջ աչքերում:

Դու սովորեցրիր ինձ՝ որն է սերը,
Բայց ավա՛ղ, դու դա հաստատ չգիտես:
Ինչ էլ որ լինի, չթողնես հանկարծ,
Բանականությունը հաղթի քո սրտին,
Մարդու ուժն իր խելքն է,
Սակայն սիրո մեջ այն կործանիչ է:

Սիրո Հայուենիք

Չգիտեմ ինչպես, բայց արբած եմ ես՝
Արբած քո սիրուց:

Դու իմ թառամած հոգու միակ անթառամ սեր,
Իմ հովզերի միակ բացատրանը,
Քամի որ ճախրեմ ամպերից էլ վեր,
Լինեմ անթերի, դու իմ անթերի:

Ես գրում եմ քո սիրո մասին՝ գիտակցելով, որ
բառերը չնշին են զգացածը պատմելու համար, որ
բառերով չես կարող դիմացինին զգացնել տալ
ապրածդ: Չնայած բառերի անարժեքությանը, երբ
դրանք խոսում են սիրո մասին, ես ապրում եմ իմ
բոլոր զգացմունքները քո անունը լսելիս... Ադելինա՝,
դու ուղղակի մեկը չես, դու միակն ես, միակն ու
անփոխարինելին:

Սիրո համար չկան սահմանափակումներ: Սիրելու
համար պետք չեն պատճառներ: Քեզ մնում է միայն
ստանալ բախսի օրինությունը, որպեսզի
անձնվիրաբար սիրես մեկին: Գիտակցես, որ գտել
ես մեկին, ում հետ պատրաստ ես մի ողջ կյանք
ապրել, ում հետ դժվարություններն անգամ ժպիտով
կիաղթահարես:

Լովիզա Բաբայան

Քո անունը լսելիս սրտում հուր է վառվում,
Քո պատկերը տեսնելիս սիրտս արագ է զարկում:

Այնքան եմ ուզում քեզ ամուր գրկել,
Քո շոնչը զգալ ու ձայնդ լսել,
Քո մի հայացքից անհետ մոլորվել
Ու քո ժախտից արբած թափառել:

Նրա աչքերն ասես վառ աստղեր լինեն,
Որ չեն մարում ու վերանում,
Իսկ իմ հոգին դրանց փայլից
Քարանում է, անշանում:

Խոհեր աշնանը

Մեր սիրո աշունը, թող երբեք էլ չավարտվի...

Աղելինայի հետ զբոսնում էինք փողոցում,
աշնանային գոյսները համահունչ էին նրա հագուստի
հետ: Տերևները հանդարտիկ իջնում էին՝ ասես
քնքանքով մեզ ողջունելու: Տաք սուրճ գնեցի, ու
միասին շարունակեցինք զբոսնել: Նրա հետ երբեք
չեմ ձանձրանում, քանի որ նա անիրական է, որքան
երազը, խորիրդավոր, ինչպես հոգու արվեստը:
Զայնն ասես քնարից արձակված թանձր մեղեդի
լինի, իսկ ժպիտը՝ դյութեղեն տեսիլ: Նրա աչքերին
նայելով՝ կորցնում եմ ինձ իրականության մեջ ու
մարդկային աշխարհին արժեզրկվում է իր ողջ
քնույթով, որովհետև աշխարհը լի է
ապականությամբ, իսկ նա՝ մաքրությամբ:
Աղելինային գտնելն ամենամեծ հաջողությունն էր,
նրա սերը՝ ամենաիրական հեքիաթը:

Երանելի են այն մարդիկ, ովքեր կգտնեն սիրո
ճշմարիտ քնույթն իրենց սիրելիի մեջ և կպահպանեն
անաղարտ սիրո օրենքները՝ լինել հոգատար,
նվիրված և ներողամիտ:

Մենք միասին քայլում ենք, ու մեր ճանապարհը չի
երբեք չի ավարտվի, բայց այս ժամանակը...

Լոփա Բաբայան

Աղելինա՝, երանի՝ կարողանայի կանգնեցնել
ժամանակը՝ քեզ հետ ավելի երկար լինելու համար»:

Աղելինան փակեց օրագիրն ու զգաց, թե ինչպես
են հոյզերը տակնուվրա արել իր ներաշխարհը: Ել
ավելի անտանելի էր սկսել կարոտել Արելին, ու
սպանում էր նրան անռոշությունը: Աղելինան
խոստացել էր Արելին, որ ինչ էլ լինի, սպասելու է
նրան և շարունակում էր սպասել, բայց այս անգամ
վերադարձն անկանխատեսելի է:

Օրն օրվա վրա գալիս էր, գնում, բայց Արելից ոչ մի
նորություն չկար:

Աղելինան ու Գևորգը պայմանավորվեցին ու նորից
նույն վայրում հանդիպեցին:

-Գև, ի՞նչ անենք, ինչպե՞ս կարող ենք նորություն
իմանալ:

-Արի՝ զանգենք թեծ գիծ, տվյալներն ասենք, գոնե
կիմանանք՝ զոհվածների ցուցակում չկա՛:

-Ե՛, ես վստահ եմ, որ Արելը ողջ է, ես զգում եմ
նրան:

-Ների՛ր, Աղե՛լ, բայց քո զգացական
կարողությունները շատ քիչ են,- ասաց Գևորգն ու
զանգահարեց թեծ գիծ:

Սիրո Հայրենիք

-Ասե՛ք զինվորի տվյալները:

-Աբել Աղաջանյան Աշոտի, 22.04.2000:

-Զոհվածների ցուցակում այդ տվյալներով
զինծառայող չկա:

-Փա՛ռ Աստծո, շնորհակալ եմ:

-Տեսար, ասում էի չէ՞:

-Թող ես սխալ լինեմ, դու ճիշտ, բայց Աբելս լավ
լինի:

-Ապրե՛ս, Գև, որ կողքիս ես:

-Ես երևի միակն եմ, որ ոչինչ չեմ անում,- գլուխը
կախեց Գևորգը: Հա՞ , ի դեպ Կարենից ի՞նչ կա:

-Կարգին է իր հետ ամեն ինչ, փա՛ռ Աստծո:

-Ես էլ եմ ուզում գնամ սահման, եթե Աբելն իր
անփորձ վիճակով գնացել է դիրք պահի, ես առավել
լս պարտավոր եմ:

-Ես իրոք չգիտեմ՝ ինչ ասեմ, պատերազմը շատ
դաժան է, բայց հանուն հայրենիքի պետք է
պայքարել,- ասաց Աղելինան ու գրկեց Գևորգին:

-Արիությունը, շաղակրատանքը, արդարությունը մեր
կողմն են: Ուրիշ ի՞նչ է մեզ հարկավոր:

-Գև ջան, դրանք արժեզրկվել են 21-րդ դարում:
Մենք կեղծիք ենք շնչում: Հիմա ճշմարիտը նա է, ով
ուժեղ է:

-Դա էլ ես ճիշտ ասում:

Լուիզա Բաբայան

Երեկոյան իր մոր հետ հայկական ավանդական
տոլմա էր պատրաստում:

-Կարենս տոլմա շատ է սիրում:

-Թփովն ամենասիրելին է:

-Կծու է շատ սիրում, - մեկը մեկին լրացնում էին
Աղելինան ու Գոհարը:

-Ա՛դ, Աբելից նորություն չկա՞:

-Թեժ գիծ ենք զանգահարել, զոհվածների ցուցակում
չկա: Գիտեմ՝ շատ չնչին է, բայց այլ նորություն
չունենք:

-Լավ, այդ տղայի մտքով ի՞նչ է անցել: Կարող է՝
գիտի ֆիլմ է ու պարզապես գնացել է
մասնակցություն ունենալու համար: Նա չի ծառայել,
ինչպե՞ս պիտի գլուխ հանի:

-Ի տարբերություն շատերի՝ նա այնտեղ
ձևականությունների համար չի գնացել, այլ
պատերազմի լրջությունը գիտակցելով՝ մեկնել է
ճակատ՝ մեզ ու մեր երկիրը պաշտպանելու:

Սիրո Հայրենիք

-Ես հուսով եմ, որ նրան ոչինչ չի պատահի:

-Ադե՛լ, Գոհա՛ր, շուտ հագնվեք, գնում ենք
հիվանդանց. Կարենին հիվանդանց են բերել,-
խուճապի մատնված՝ սենյակ մտավ Գարեգինը:

-Ի՞նչ, ի՞նչ է եղել տղայիս:

-Վա՛յ, դե արագացրեք, գնանք էլի, ճանապարհին
կպատմեմ:

Նրանք արագ շտապեցին մեքենան ու րոպե շուտ
ցանկանում էին հասնել հիվանդանց՝ Կարենի մոտ:

-Հայրի՛կ, խոսի՛ր, հասկանանք:

-Ադե՛լ ջան, ես էլ շատ բան չգիտեմ, զանգեցին ու
ասացին, որ Կարենիս վիրավոր հիվանդանց են
բերել:

Երբ հասան հիվանդանց, կայծակնային
արագությամբ դուրս եկան մեքենայի միջից և
վազեցին: Նրանք սրտատրով սպասում էին
միջանցրում, և կես ժամ անց դուրս եկավ բժիշկն ու
ասաց.

-Չեր զինվորի հետ ամեն ինչ կարգին է:

Լովիզա Բաբայան

-Շնորհակալ եմ, Տե՛ր,-Կարենի ծնողների սրտից մի մեծ քար ընկավ, ել ի՞նչ էր պետք նրանց որդու կյանքից ու առողջությունից բացի:

Աղելինան քայլելով գնաց մի փոքր հեռու: Նրա սրտում անդորր էր տիրել, այդ պահին նրա համար ամենակարևորը եղբայրն էր և Աստծո օրինությամբ նա լավ էր: «Իսկ որտե՞ղ է Արելը, արդյոք նա ո՞ղջ է, գուցե քաղցած է կամ ծարավ, հնարավոր է՝ մրսում է», - մտքերը հանգիստ չէին տալիս:

Աղելինան հիշեց իր և Արելի հետ անցկացրած պահերը, ապագայի պլաններն ու դրանք կասեցրած պատերազմը:

-Աղջի՛կս, Կարենը պալատում է, չե՞ս գալիս:

-Իհարկե, գալիս եմ, գնացինք:

Պալատ մտնելուն պես Կարենի մայրը բղավեց:

-Տղե՛ս, չես պատկերացնի՝ որքան ուրախ եմ, որ տեսնում եմ քեզ, լա՞վ ես, ին ցավող տեղ չունե՞ս:

-Լավ եմ, մա՛մ ջան, մեջքս է մի քիչ ցավում, ձեռքս եմ կոտրել, բայց շուտ կապաքինվեմ, դուք ձեզնից պատմեք:

-Զայնդ էլ է քաշված, տղե՛ս:

Սիրո Հայունիք

-Մա՛մ ջան, ամեն ինչ լավ է:

Ադելինան, որ արցունքներն աչքերին հետևում էր
խոսակցությանը, միջամտեց.

-Կարոտել եմ քեզ, Կա՛ր,- գնաց ու գրկեց եղբորը:

-Ես էլ քեզ, իմ սիրուն Ադել, իմ բացակայության
ընթացքում քեզ չեն նեղացրել չէ՞:

-Չէ՛, հանգի՛ստ եղիր, Կարե՛ն:

-Հա ջան:

-Գիտեմ՝ ճիշտ չի քեզ հիմա նման հարցեր տալ, բայց
կպատմես՝ ինչ էր կատարվում սահմանում:

-Ադե՛լ, դե վերջացրու, դրա ժամանակը չի, թող
հիմա տղես հանգստանա, հետո առանձին կխոսեք,-
ասաց Գարեգինը:

-Ադե՛լ, դու հայրիկիդ հետ գնա տուն, ես կմամ
հիվանդանոցում Կարենի հետ:

-Առավոտ գալու եմ, Կա՛ր, ու պիտի խոսենք:

-Լա՛վ, քաղցրս, -Ադելինան համբուրեց մորն ու
եղբորը ու հոր հետ գնաց տուն:

Ամբողջ ճանապարհին ուրախության և
տիրության միմիկաներ կարելի էր նկատել

Լովիզա Բաբայան

Աղելինայի դեմքին: Ուրախ էր, որ եղբոր հետ ամեն ինչ կարգին է և տխուր, որ լուր չունի Արելից: Նրա խառը հոգեվիճակը նկատել էր հայրը, և երբ վերադարձան տուն, հարցրեց.

-Աղջիկս, տեսնում եմ, որ լավ չես, խոսի՛ր ինձ հետ:

-Հայրի՛կ, Կարենին տեսնելուց հետո աշխարհն իմն է, բայց Արելից լուր չունեմ, ու աշխարհս դատարկ է:

-Հասկանում եմ, բայց դու ուժեղ ես, ի՞մ աղջիկ, հավատա՛, սպասի՛ր:

-Ամեն օր արթնանում եմ նրա մասին լուր իմանալու հույսով, բայց անօգուտ:

-Անօգուտ չի, քանի դեռ օրդ նրանով է սկսվում, քանի ինքդ գգում ես նրա գոյությունը:

-Ծիշտ է, բայց ախր հույսերը կարծես ինքնախարենքյան դասեր լինեն: Հասկանում ես, հայրի՛կ, ես ուզում եմ իրապաշտ լինել, կյանքը չի կարող մեր ուզածով ընթանալ, ճակատագիրն է թելադրում մեր կյանքի սցենարը:

-Դա չի նշանակում, որ պետք է մտածես, թե ճակատագիրը վատ սցենար է գրել քեզ համար: Ավելորդ անհանգստությունն ու երևակայությունից բխած մտքերը խանգարելու են քեզ: Գնա՛,

Սիրո Հայրենիք

թուլացի՞ր, մտածի՞ր, որ քեզ համար ամենալավն է
նախատեսված, ամեն ինչ լինելու է այնպես, ինչպես
որ պետք է:

-Ըսրհակալ եմ, հայրի՞կ:

-Գնա՛, աղջի՞կս, եթե ուզում ես, լա՛ց եղիր: Մեր
արցունքները ցավից են առաջանում, բայց և
ցավազրկող հատկություն ունեն:

-Սիրում եմ քեզ , - Ադելինան գրկեց հորն ու գնաց
ընելու, բայց ընելու համար մտքերն անսպառ էին,
դրանցից առաջացող ցավը՝ ուժգին, իսկ
արցունքները՝ ցավազրկող:

«Կան ժամանակներ, որ երազելը սպանիչ է
դառնում: Ես այդ ժամանակներն եմ ապրում.
Երազում եմ, որ առնեմ կարոտս քեզնից, հագենամ
քո ներկայությունից, քո ձայնը լսելու ցանկությունից:
Դու երազանքի, կյանքի իմաստ ես»:

Մտատանջող գիշերվանից հետո Ադելինան
արթնացավ և շտապեց հիվանդանոց:

-Հե՛յ, ես եկա, եղբորս համար իր սիրելի
ուտեստներն եմ քերել:

-Իմ քույրն ուրիշ է:

-Աղջ' կս, իսկ հայրդ ու՞ր է:

Լովիզա Բաբայան

-Զգիտեմ, մա՞մ, ես որ արթնացա, տանը չէր, մենակ եմ եկել:

-Մա՞մ, դու 'րս արի, մի քիչ ցրվի, ես էլ Աղելի հետ առանձին զրուցեմ:

-Լա՞վ, եթե բան պետք լինի, զանգեք:

-Դե՛, քո՛յր ջան, խոսի՛ր, ինչո՞ւ ես մի տեսակ:

-Արելը դիրքերում է, ու ոչ մի տեղեկություն չունեմ:

-Արե՛լը, նա բանակ չի գնացել, ինչո՞ւ է կամավորագրվել:

-Արելի հայրը ասել էր, որ իրեն լավ չի զգում ու Արելին երկրից դուրս էր բերել, որովհետև զիտեր մոտալուտ պատերազմի մասին: Արելն էլ հետո իմացել է դրա մասին, վերադարձել Հայաստան ու կամավորագրվել:

-Ո՞վ է քեզ ասել:

-Մայրն էլ զանգել, մտածում էր՝ Արելից տեղեկություն կիմանամ, բայց անգամ չզիտեի, որ Հայաստան է վերադարձել, Գևորգից եմ իմացել:

-Ա՛ղ, քեզ սփոփող ոչինչ չեմ կարող ասել, վիճակն իրոք շատ բարդ է սահմանին, ես մազով եմ փրկվել:

-Դու կոտրում ես ինձ, Կարե՞ն:

Սիրո Հայունիք

-Դա է ճշմարտությունը, Ադի՛, բայց շատ մի՛ նեղսրտիր:

-Երանի կյանքում ամեն բան խաղաղ լիներ՝ երկիրը, մտքերը, հոգին:

-Մարտի դաշտում շատերը կորցրեցին իրենց ուժքերը, ձեռքերը, տեսողությունը, լսողությունը, խոսելու կարողությունը:

-Այնքա՞ն ցավալի է:

-Դա նրանց համար է ցավալի, նրանց համար է դժվար, որ այդ վիճակում հայտնվելուց հետո հասկանում են, որ Էլ առաջիկա նման սիրված չեն, ազատ չեն, որ հոգնեցրել են՝ մի բաժակ ջուր խնդրելով կամ հազար ու մի այլ հարցով դիմելով:
Դու պատրա՞ստ ես, Ադելինա՛, նրան ընդունել,
տանել նրա բոլոր հոգսերն ու մեղմացնել նրա ցավը:

-Ես սիրում եմ նրան, Կարե՞ն, դրանք լոկ խոսքեր չեն:
Ես պատրաստ եմ հանուն նրա ամեն բանի, միայն թե
նա կողքիս լինի:

-Եթե նույնիսկ ստիպված լինես ողջ կյանքում նրան խնամել, կերակրել, պատմել գեղեցիկ տեսարանի մասին, փորձել հասկանալ նրան, երբ նա լոռում է, կամ հարյուր անգամ բացատրել, թե խոսքդ ինչի մասին է, պատրա՞ստ ես լինել նրա հետ:

Լովիզա Բաբայան

-Ես թույլ աղջիկ չեմ ու պատրաստ եմ լինել նրա կողքին, հոգ տանել նրա մասին, անկախ ամեն ինչից:

Սենյակի դուռը բացվեց ու խուճապահար ներս մտավ Գոհարը.

-Աղելինա՛, հայրդ էր զանգել, շտապի՛ր տուն, քեզ հետ կարևոր խոսելու բան ունի:

Առանց երկար-բարակ հարցեր տալո՞՝ Աղելինան շտապեց տուն: Երբ հասավ տուն, նկատեց հոր մոայլ դեմքը:

-Հայրի՛կ, ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես խոժողովել:

-Աղջի՛կս, երեկվա խոսակցությունից հետո, գնացի ու ողջ կապերս օգտագործեցի Արելի մասին տեղեկություն ունենալու համար:

-Հետո, ինչպե՞ս է Արելը:

-Աղջի՛կս, Արելը...Արելը մահացել է:

Աղելինան ուշագնաց եղավ, իսկ երբ արթնացավ, հիվանդանոցում էր:

-Արե՛լ, չէ՛, չի կարող պատահել, հաստատ շփոթմունք է, նա չի կարող մեռնել, ես սիրում եմ նրան:

Սիրո Հայրենիք

Աղելինան նմանվել էր ծայրաստիճան մոլագարի, և
ո՞վ չէր խելագարվի նման լուրն իմանալուց հետո:
Բժիշկները նրան հանգստացնող դեղեր
ներարկեցին, որոնք կարճ ժամանակ անց իրանց
ազդեցություն ունեցան:

Աղելինան լուռ էր, հայացքը հառել էր մի կետի.

-Դու վստա՞հ ես, հայրի՛կ, որ Աբելն էլ չկա:

-Վստահ եմ, ձեռքին այն ժամացույցն էր, որ հատուկ
նրա համար էինք պատրաստել տվել:

-Խնդրու՞մ եմ, ինձ մենա՛կ թողեք, գնացե՛ք,
Աղելինան լուռ արտասվում էր ու խոսում ինքն իր
հետ .

-Աբե՛լ, դու կաս, դու խոստացել ես, որ միասին ենք
լինելու մինչև մահ, ես սիրում եմ քեզ, Աբե՛լ,
կյանքիցս շատ, առանց պատճառ, անսահման: Դու
չէիր կարող ինձ մենակ թողնել, ախր մենք սիրում
ենք իրար ամենահրական սիրով:

Սենյակը լցվել էր գոռոցներով, արցոննքներով:
Աղելինան կորցրել էր մեկին, ով ամենաթանկն էր իր
համար, կորցրել էր իր սերը, բայց նրանց
կապվածությունն ավելին էր, քան սերը, ավելի
զորեղ, քան կարելի էր նույնիսկ երազել:

Լուիզա Բաբայան

Չհաշտվել իրականության հետ, չհամակերպվել
այն մտքին, որ նա այլս չկա, որ այլս ձեռքդ չի
բռնի, կողքիդ չի կանգնի ու իր ջերմությամբ քեզ չի
կլանի: Նա կար, բայց ջնջվեց նրա գոյությունը,
սահմանափակվեցին նրա հետ կերտվող
հիշողությունները, կանգ առավ ժամանակը, կյանքը
կորցրեց իր իմաստն ու իրեն իմաստ տվողին՝
Աբելին:

Մի քանի օր էր Աղելինան ոչինչ չէր ուտում,
արցունքները քարացել էին աչքերին: Կտրվում էր
իրականությունից, մտքերով տեղափոխվում անցյալ,
ուր մենակ էին իրենց հավերժական սիրո
աշխարհում: Հիշում էր Աբելի խոսքերը. «Դու մենքն
ես, առանց որի արժե չապրել»: Ի՞նչ աներ
Աղելինան, չապրե՞ր: «Մտքումս ամենաշատը քո
մասին եմ քարձրածայնում», - ի՞նչ աներ Աղելինան,
ինչպե՞ս ստիպեր մտքերին չեզոքանալ:

Աղելինայի դեմքին հուշերից մեղմ ժպիտ էր
առաջանում, հետո երբ վերադառնում էր
իրականություն, խելագարվում էր, անիծում կյանքը,
բայց միևնույն է, սրտից չէր կարողանում դուրս բերել
ցավը, չէր հավատում, չէր ուզում հավատալ: Սիրտը
քարացել էր, բայց շարունակում էր սիրել: Մոլեգնում
էր այն մտքից, որ վիճակված է իրեն մնալ առանց
սիրո, որ կորցրել էր միակին:

Սիրո Հայրենիք

Ասզոր եք, մարդիկ, հասկանալու: Շատերը չեն լսի,
շատերը կլսեն, բայց չեն հասկանա, ոմանք
կձևացնեն, թե ցավում են, ոմանք էլ գուցե իրոք
կափսոսան, բայց դարձյալ ամեն ոք կապրի այնպես,
ասես ոչինչ էլ չի եղել: Ցավը կմնա զգացողի սրտում
ու ողջ կյանքում, իսկ մենք կշարունակենք ապրել,
ապրել...

Կյանքը ծննդից մինչև մահն ընկած ճանապարհն է,
որ պետք է անցնենք տևական
ժամանակահատվածում: Այն բաղկացած է
բազմաթիվ արգելքներից: Շատերը ճանապարհի
սկզբից հանձնվում են, ոմանք միայն ճանապարհի
կեսն են անցնում, և քերին է բախտ վիճակվում
հասնել վերջին: Այո՛, մարդիկ, դեռ չծնված,
մահանում են, ենթարկվում դժբախտ
պատահարների, զոհվում, պատերազմում կամ էլ
ուղղակի ծերանում: Թե ինչքան կապրենք, գիտի
միայն ամենալարող Աստված, բայց թե ինչպես
կապրենք, դա կարող ենք որոշել ինքներս: Պետք է
ուղղակի հասկանալ, որ կյանքը ինքնին մի պահ է և
ամեն վայրկյանն ապրել այնպես, ասես վերջինն է:

Հերթական գլորվող օրերից մեկն էր: Երկրում
պատերազմը շարունակվում էր, իսկ Աղելինան
կարծես տանու էր տալիս իր ներքին աշխարհի

Լովիզա Բաբայան

պատերազմը: Գրեթե միշտ սենյակում փակված էր,
ոչ ոքի հետ խոսել չէր ցանկանում:

-Աղե՛լ, Գևորգն է եկել, ուզում է հրաժեշտ տալ, որ
մեկնի ճակատ,- սենյակի դուռը ծեծեց Կարենը:

-Թող գա,- լսվեց դռան հակառակ կողմից:

Գևորգը ներս մտավ, դեմքին որևէ
արտահայտություն չկար:

-Ողջո՞յն, Աղե՛լ, զիտեմ, որ խոսելու
տրամադրություն չունես: Նորությունը, որ իմացանք,
շատ բան փոխեց բռլորիս կյանքում, եթե արժե սա
կյանք համարել: Մեկնելուց առաջ պարզապես
ցանկացա քեզ հրաժեշտ տալ ու խոստանալ, որ
կլուծեմ Աբելի վրեժը:

-Շնորհակալ եմ, Գև՝ մեր կողքին լինելու համար,
խնդրում եմ՝ գոնե դու անփորձանք վերադարձիր:

Գևորգը գրկեց, հրաժեշտ տվեց Աղելինային ու
Կարենին և հեռացավ:

-Աղե՛լ, կարո՞ղ եմ խոսել հետդ, ինձ համար ցավոտ է
քեզ այս վիճակում տեսնել,- հարցրեց Կարենը:

-Խոսքերով չես կարող բուժել հոգուս վերքերը,
դրանք սպիանալու են ու մնան ողջ կյանքում:

Սիրո Հայրենիք

Մի քանի րոպէ անց Կարենը սկսեց երգել.

-Երազ իմ երկիր հայրենի,

Հոգսերդ շատ, հույսդ մեծ,

Քարքարոտ երկիր:

-Ես մի բուռն եմ քո հողի,

Ես մի ծիլն եմ քո արտի,

Ես մի թերթն եմ քո ծաղկի,

Հայրենի՛ երկիր,

Հայատա՞՞ն,- լաց լինելով՝ շարունակեց Աղելինան:

-Պետք չէ հայրենիք սպասել օտարից և

ճակատագրից, եթե դա մեր արյունով պաշտպանելու

չափ հայրենասեր չենք,- օդում Նժդեհի խոսքերի

վերջին հնչյուններն էին թևածում, իսկ նրանք

հայացքները հառել էին մի կետի, ուր մտքի ճամփով

հայրենիքն էին փնտրում, հայրենիք էին սիրում ու

պաշտպանում:

Մի քանի րոպէ անց դուռը թակեցին, հավանաբար
նրանց ծնողներն էին: Դուրս էին եկել անից՝ առանց
տեղյակ պահելու: Կարենը գնաց դուռը բացելու և
անակնկալի եկավ՝ տեսնելով Արելի ծնողներին:

-Բարև ձեզ,- ասաց Կարենը, բայց նրան

անպատճախան թռղնելով՝ Արելի ծնողներն

առաջացան հյուրասենյակ:

Լովիզա Բաբայան

Աղելինան, տեսնելով նրանց, տեղից վեր թռավ,
լեզուն պապանձվեց, բայց Կարենը գնաց, բռնեց
քրոջ ձեռքն ու իր հայացքով սիրտը ետ բերեց: Աբելի
հայրն ու մայրը նստեցին նրանց դիմաց: Մթնոլորտը
լարված էր, Աղելինան հազիվ էր զսպում
արցոնքները:

- Պատմե՛ք ամեն ինչ, մենք ուզում ենք իմանալ բոլոր
մանրամասները:

Այդ ընթացքում ներս մտան նաև Աղելինայի հայրն
ու մայրը:

-Աշո՞տ, տղայիո՞՝ Աբելի դին գտել են անճանաչելի
վիճակում,- ասաց Գարեգինը:

Գնաց պահարանից վերցրեց մի ժամացույց ու
հարցրեց.

-Ծանո՞թ է:

-Հա՛, միշտ Աբելիս ձեռքին էր,- սկսեց լաց լինել
Արաքյան:

-Չեմ հավատում, որ տղես էլ չկա: Ես եմ մեղավոր,
եթե չստեի նրան, ամեն ինչ գուցե այլ կերպ կլիներ:

-Ոչ մի բան էլ այլ կերպ չէր լինի: Այս ամեն ինչի
մեղավորը Աղելինան է, որովհետև Աբելի ուղեղը
լցրեց հայրենասիրական անհեթեթ գաղափարներով:

Սիրո Հայրենիք

Իսկ հիմա զ՞ն ես, Աղելինա՛, նա հավերժ դարձավ
հայրենիքիդ:

-Տիկի՞ն Արաքսյա,- փորձեց սաստել Կարենը:

-Նոի՛ր, հայրենիք, հայրենիք, իմ որդուց թանկ չէր ձեր
հայրենիքը:

-Հայրենիքս ինձ համար կարևոր էր, բայց ոչ առավել
քան Աքելը, երդվում եմ,- լաց լինելով՝ ասաց
Աղելինան:

-Չո երդումը գին չունի, դու՛ ես մեղավոր, լսու՛մ ես,
Աքելը քո պատճառով է մահացել:

Ցավը, որ պատճառեց Աքելի մայրն իր խոսքերով,
անտանելի էր: Աղելինան, լաց լինելով, վազում էր:
Դրսում ցուրտ էր, բայց այդ ցուրտն արդեն հաճելի
չէր, քանի որ սառեցնում էր մրսած հոգով մարմինը:
Աքելն էլ չկար, որ ջերմացներ:

-Մի՛թե ինձ կարելի էր մեղադրել սիրածս տղայի
մահվան մեջ, մի մարդու, ում համար սեփական
կյանքս էլ առանց վայրկյան անզամ մտածելու
կտայի: Աքե՛լ, երդվում եմ, ես քեզ բոլորից, ամենից
շատն եմ սիրել: Եվ իրոք, ու՞մ է պետք հայրենիքը,
որտեղ ես ապրելու եմ առանց քեզ: Այս հայրենիքը
լոկ հայրենիք չէր ինձ համար հայի, այն հայրենիքն
էր իմ ու քո սիրո:

Լովիզա Բաբայան

Աղելինային գտան ծառի տակ նստած,
ամրողովին թրջված էր, սառել էին սիրտը, հոգին և
մարմինը: Նրան տարան տուն, թեյ տվեցին,
պառկեցրին տաք անկողնում:

Ողջ գիշեր Կարենը Աղելինայի կողքին էր:
Աղելինան դողում էր, շուրթերից պարբերաբար
հնչում էր. «Աքե՛լ...Աքե՛լ», սենյակը վիշտ, կարոտ,
կարեկցանք էր շնչում: Գիշերն ինքն էլ չհասկացավ,
թե ինչպես լուսացավ:

Առավոտը մոայլ էր ու չսպասված: Քամին սուլում
էր ահազնաբար՝ կարծես մարդկանց պատմելով
սպասվելիք վտանգի մասին: Մարդկանց հոգիներում
մերթընդմերթ լույսերն էին մարում, խավար էր
գոյանում ու կրծում նրանց դառնացած հոգիները:
Աղելինան այդ օրը ասես ստիպված արթնացավ:
Ցանկանում էր դուրս գալ ննջասենյակից, երբ
Կարենի գոռողը լսեց.

-Չեմ հավատում, ես չպետք է գայի, պիտի մնայի ու
պայքարեի մինչև մեռնելս:

-Տղա՛ս, դու ոչինչ փոխել չէիր կարող, հնարավոր
ամեն բան արել ես:

Սիրո Հայրենիք

-Մա՛մ, դու չես հասկանում, արյունը մեջս եռում է, մի ողջ թուրքի բանակ կվոտորեմ, բայց չեմ հովանա, մա 'մ:

-Ի՞նչ է պատահել , -սենյակից դուրս եկավ Ադելինան:

-Ադե՛լ ջան, գնա՛. պառկի՛ր, առանց այդ էլ քեզ լավ չես զգում:

-Կարե՛ն, դու խոսիր:

-Ադե՛լ, պատերազմն ավարտվեց:

-Այդ դեպքում ինչո՞ւ ես բարկացած:

-Արցախից զգալի տարածներ ենք հանձնել:

Ադելինան լաց եղավ.

-Ինչո՞ւ է իմ կյանքն այդքան դաժան, նախ՝ սիրածս տղայի մահը, հիմա էլ՝ Արցախս:

-Ես էլ եմ բարկացած, բայց ամեն դեպքում մայրիկը ճիշտ է. ոչինչ էլ փոխել չենք կարող:

-Ճիշտ եք, մենք ոչինչ փոխել չենք կարող, բայց շատերը իրենց քմահաճության պատճառով փոխեցին մեր ճակատագրերը:

Երեկոյան Ադելինան դուրս եկավ զբոսնելու՝ կարծելով, որ աշնանային մեղմ քամին կփարվի իրեն

Լուիզա Բաբայան

և կփարատի հոյզերը: Բայց ամեն քայլի հետ մի նոր հիշողություն էր արթնանում, հիշեցում՝ անավարտ սիրո ու չստացված ապագայի մասին:

Մի զույգի տեսավ՝ ծառի տակ նստած: Տղան կարդում էր աղջկա համար, իսկ աղջիկը հիացմունքով նայում էր նրան՝ մոռանալով գրքի մասին: Հիշեց իրեն ու Աքելին, աստղազարդ գիշերն ու սիրո խոստումները, հիշեց, թե ինչպես Աքելը խոստացավ հիշողության օրագիր պահել, պատմել իրենց սիրո մասին աշխարհի բոլոր լեզուներով, բայց միակ հուշը հիմա օրագիրն էր, վերջին խոսքը, որ լսել էր Աքելից՝ «կներես»-ը:

«Այդ դու՛ ինձ ներիր, Աքե՛լ, ների՛ թինձ, խնդրու՛մ եմ: Գիտես, Աքե՛լ, թեև կողքիս չես ,բայց միևնույնն է, ապրում ես ինձ հետ կյանքիս բոլոր վայրկյաններում: Կարուն ուղղակի անտանելի է, գիտակցումը, որ կյանքն առանց քեզ է շարունակվում՝ անընդունելի: Ու չնայած այս ամենին՝ ես քեզ սպասում եմ ու վստահ եմ, որ կգաս»....

«Աբելի հոգեհանգստին ներկա գտնվել չկարողացա, վախեցա շդիմադրել ցավին: Ինձ ասել էին, որ Աբելի դին անճանաչելի վիճակում են գտել ու միայն ձեռքի ժամացույցից ու գրանի նամակից են կարողացել պարզել ինքնությունը: Բայց թե ինչ նամակ էր, այդպես էլ չիմացա, որովհետև Աբելի մայրը խօսել էր իմ հետ կապերը, ասել էր, որ մոռանամ իրենց ընտանիքը: Համենայնդեպս գիտեմ մի քան, որ այլևս լաց չեմ լինելու, այլ ապրելու եմ իմ և նրա փոխարեն, որ նայի վերսից ու հպարտանա ինձնով, իսկ ես հպարտանում եմ նրանով՝ իմ քաջ հերոսով», -
Աղելինան փակեց իր և Աբելի հիշողության օրագիրը, դրեց պայուսակն ու վերցնելով ճամպրուկը՝
հրաժեշտ տվեց բոլորին: Բակում նրան սպասում էր Կարենը: Աղելինան նստեց մեքենան ու շարժվեցին դեպի օդանավակայան: Այո՛, Աղելինան որոշել էր նոր կյանք սկսել, իսկ Հայաստանում մժնոլորտը ճնշում էր նրան: Այդ պատճառով որոշել էր մեկնել ԱՄՆ՝ աշխատելու, կայանալու և իր առջև նպատակ էր դրել, որ էական հաջողությունների հասնելուց հետո կվերադառնա Հայաստան և օգտակար կլինի ազգին ու հայրենիքին, իր և Աբելի սիրո հայրենիքին:
-Աղե՛լ, կարծում եմ, որ երբ տղաս ծնվի, բոլորով կգանք քեզ մոտ, մենակ չենք թողնի:

Լուիզա Բաբայան

-Իմ հոգատար եղբայր, ժամանակն է ընդունելու, որ ես այլս երեխա չեմ, ու թող տղադ իր հայրենիքում մեծանա:

-Ուրեմն հորաքույրը պիտի խոստանա, որ շուտ կվերադառնա:

-Խոստառում եմ: Այդ աշխատանքը շատ պահանջված է ու եթե ուշանամ, այն ձեռքից բաց կթողնեմ, դրա համար չեմ կարող սպասել մինչև երեխադ ծնվի: Անարդար է չէ՞, դու այդքան հոգատար եղբայր ես, իսկ ես չափից դուրս էգոխստ քույր:

-Այդպես մի՛ խոսիր, ամեն ինչ կարգին է, ես քեզ հասկանում եմ, դու միայն քեզ լա՛վ նայիր: Դժվար է լինելու, բայց դու չհանձնվես, ինչ էլ լինի, հասիր նպատակիդ, ուա շատ կարևոր է: Ու մի բան էլ, մի՛շտ հիշիր, որ Հայաստանում քեզ աշխարհի չափ սիրող եղբայր ունես:

-Դու՛ էլ հիշիր, որ քեզ տիեզերքի չափ սիրող քույր ունես:

-Խոստանում եմ, ի դեպ, այսօր 20 ուազմագերիներ վերադարձել են Հայաստան:

-Է՛հ, չգիտեմ՝ ուրախանամ, որ վերադարձել են, թե լաց լինեմ, որ այդ Փաշխտների հետ են եղել ու ինչերի միջով ասես որ չեն անցել :

Սիրո Հայրենիք

-Իրենք իրենց պատիժը կստանան՝ մեր ազգի հետ այսպես վարվելու համար, եթե ոչ երկրային կյանքում, ապա երկնային կյանքում դա կլինի հաստատ: Դե չէ՝ որ երկնային կյանքում կապ չունի, որ դու ՆԱՏՕ-ի անդամ ես, նավթ ունես ու էլի նման բաներ:

-Ծիշտ ես, ինձ միայն այդ միտքն է հանգիստ տալիս, որ ի վերջո պատժվելու են: ԱՇխ, գեղեցիկ է Երևանս, չեմ պատկերացնում, թե ոնց եմ դիմանալու առանց իմ հարազատ փողոցների, քաղաքների, օդ ու ջրի:

-Ժամանակի ընթացքում կհամակերպվես:

Կես ժամ անց նրանք հասան Զվարթնոց օդանավակայան: Օդանավակայանում Աղելինան ու Կարենը հրաժեշտ տվեցին իրար: Աղելինան շնորհակալություն հայտնեց Կարենին ուղեկցելու համար, բայց խնդրեց, որ իրեն մենակ թողնի՝ ասելով, որ ցանկանում է մինչև ԱՄՆ-ը մեկնելը միայնակ մնալ. Կարենն էլ չմերժեց:

Թռիչքի ժամը մոտ էր, և Աղելինան որոշեց գնալ ինքնաթիռի կայանման վայր: Նա չէր ցանկանում հեռանալ հայրենիքից, այլ ցանկանում էր փախչել ճնշող իրականությունից: Նրա քայլերի հաճախականությունը սկսում էր աստիճանաբար նվազել, և հանկարծ հեռվից մի ծանոթ ձայն գոչեց.

Լովիզա Բաբայան

-Ինչ-որ մեկն ասում էր, որ երբեք չի հեռանա այն դրախտային օրիանից, որին մեկ բառով Հայաստան են ասում:

Աղելինայի սիրտը արագ բարախեց, մարմնով սարսուո անցավ: Դա իր խոսքերն էր, որ ասել էր Արելին, իսկ ձայնը . . .

Աղելինան շրջվեց ու լույսի արագությամբ վազեց Արելի գիրկը: Այնքան ամուր էր գրկել նրան, որ քիչ էր մնում խեղքեր:

-Ասա՛, որ սա երազ չի, ասա՛, որ դու ես, Արե՛լ:

-Ես եմ, Արե՛լ,- ասաց Արելն ու իր գիրկն առավ Աղելինային:

Երկար ժամանակ Աղելինան, Արելին պիստ գրկած, լաց էր լինում:

-Արե՛լ, ես սիրում եմ քեզ, ների՝ թ ինձ, խնդրու՛մ եմ: Ես շատ եմ տառապել, խելագարվել էի քո կարոտից:

-Աղե՛լ, ի՞մ աղջիկ, ամեն ինչ կարգին է, մենք միասին ենք լինելու միշտ, ինչպես որ խոստացել էի:

-Ուրախությունից մեռնել եմ ուզում:

-Մեռնե՛լ,- ծիծաղեց Արելը, դու դա չես տեսել, Աղե՛լ, բայց երբ մեր սերը խոսեց, մահը խոնարհվեց:

Սիրո Հայրենիք

-Արե՛լ, ես այնքան երջանիկ եմ, ինձ թվում է՝ երազ է, շուտով կարթևանամ ու նորից հուսախար կլինեմ:

-Ո՛չ, սիրելի՛ս, սա կատարյալ իրականություն է: Հրաշքներն իրականանում են, պարզապես հավատալ է պետք:

-Ուղղակի լինելդ եմ սիրում, քեզ եմ սիրում, քո տեսակը, բնավորությունդ, որին համաձայն՝ փորձում ես կատարյալ լինել իմ ես-ի համար, չնայած այսպես թե այնպես վաղուց ես հատել կատարելության սահմանը,- Ադելինան ժպտաց ու էլ ավելի ամուր գրկեց Արելին:

-Այդ դու ես ինձ կատարյալ դարձրել, Ադելինա', շարունակի՛ր ժպտալ, լինդրու՛մ եմ. քո ժպիտից ուղեղումս Էնդրֆիններ են արտադրվում:

-Արի շուտ տուն գնանք ու պատմի՛ր ինձ ամեն քան:

Ամբողջ ճանապարհին բարձրածայն լոռություն էր: Ադելինայի հոգում այնպիսի հաճելի հանգստություն էր իշել, կարծես այդքան ժամանակ սարսափելի երազ էր տեսնում, իսկ հիմա արթնացել է, և ամեն քան կարգին է:

-Իմ հիվանդություններն ու ցավերը քո մասին հիշողություններով էին բուժվում: Դու իմ ուժի միակ աղբյուրն ես, Ադելի՛ս, երբ փորձում եմ

Լովիզա Բաբայան

հուսահատվել, տրտմել, բավական է հիշեմ քո
գոյության մասին, և կյանքիս պայքարը կդառնա
հաճելի, տխրությունս՝ անտեղի: Ո՞վ ես դու, Աստված
քեզ սիրի:

-Դու ամենալավը գիտես, թե ով եմ ես, Արե՛լ, այլևս
թող մեզ հիվանդության ու ցավի, կարոտի ու
սպասման բաժին չհասնի:

Երբ հասան տուն, բոլորը շոկի ենթարկվեցին:
Կարկամել էին, և ոչ խոսել չեր կարողանում: Մի
որոշ ժամանակ անց, Կարենը, խախտելով այդ
լոությունը, ասաց.

-Արե՛լ, բոլորը կարծում էին, որ մահացել ես,
հոգեհանգիստ է եղել: Քո դին գտել էին
անձանաչելի վիճակում ժամացոյցի ու նամակի հետ:

-Երկար պատմություն է, ուստի զի՞նվեր
համբերությամբ:

-Խոսի՛ր, ցավդ տանեմ,- ասաց Գարեգինը:

-Երբ գնացինք Ռուսաստան, իմացա, որ հայրս ստել
է ինձ: Վիճեցի նրա հետ ու վերադարձա Հայաստան,
հանդիպեցի Գևորգի հետ ու գնացի՝
կամավորագրվելու: Քանի որ զենքից օգտվել ու
տեղանքում կողմնորոշվել գիտեի, ինձ նույնպես
կամավորագրեցին: Կովի դաշտում շատ ընկերներ

Սիրո Հայրենիք

կորցրեցի, թշնամին անգութ էր ու գազազած: Մի տղա կար, Գեղամ էր անունը, զիտեր, որ ուզմական պատրաստվածություն չունեմ և ամեն գնով օգնում էր ինձ: Ժամացույցն ու նամակը տվել էի նրան, որ եթե ինձ հետ ինչ-որ բան պատահի, իսկ նրան հաջողվի ողջ մսալ, փոխանցի ձեզ: Ծեծ մարտերից մեկի ժամանակ նա զոհվեց: Ես ու տղաներից ոմանք հայտնվեցինք շրջափակման մեջ և գերի ընկանք: Բարեբախտաբար ես արդեն տանն եմ ու ամեն բան ավելի բարի կինքի, եթե մեր ջանքերն ուղղենք մյուս գերիներին հայրենիք վերադարձնելու մեջ:

-Իսկապես, չզիտեմ՝ ինչ ասեմ, շոկի մեջ եմ, Արե՛՛ լ շան, կարևորը հիմա մեր հետ ես , - ասաց տիկին Գոհարը:

-Ծնողներիդ տեսե՞լ ես:

-Հայաստանու՞մ են:

-Այո՛, մեր տուն էին եկել, ճիշտն ասած, մեր հանդիպումը այդքան էլ հաջող չանցավ, բայց հիմա ամեն ինչ լավ է:

-Ես չզիտեմ՝ ինչ մոտեցում ցուցաբերեմ: Նրանք զիտեն, որ իրենց տղան զոհված է, մեկ էլ հայտնվում եմ ես ու կաթվածահար անում:

Լովիզա Բաբայան

-Լավ, սպասեք, դա դեռ կորոշենք, Արելի համար մեծ սեղան բաց արեք, պիտի նշենք մեր եղբոր վերածնունդը:

Աղելինան իր մոր հետ գնաց խոհանոց՝
պատրաստություն տեսնելու:

-Արե՛լ, չես պատկերացնի, թե Աղելինան որքան է տառապել, քո վերադարձը անզուգական հրաշք էր:

-Ես խոստացել էի նրան, որ մեր սերը կհաղթի, որ միշտ միասին կլինենք, և իրավունք չունեի խոստումս դրժելու:

-Ե՛հ, էս ի՞նչ ցավ էր մեր ժողովրդի զլիսին,- ասաց
Գարեգինը:

-Պատերազմը մարդուն ֆիզիկապես և հոգեպես ճաշող ամենաուժեղ գործոնն է: Կովում ես՝ գիտակցելով, որ վայրկյաններն են ընկած կյանքի ու մահվան կիզակետում, որ պայքարդ անավարտ է մնալու, որ հավերժ հեռանալու ես նրանից, ում կյանքիցդ շատ ես սիրում: Ու հոգուդ ցավն այնքան ուժեղ է, որ չես էլ զգում վերքերդ: Ապրելու ցանկությունը կրծում է հոգիդ, փոշին՝ կուրացնում, պայքարունները՝ խլացնում, ընկերոջ մահը՝ զինաթափում: Ոտքի ես կանգնում՝ հաղթելով գիտակցությանդ, որդեգրելով հանուն հայրենիքի,

Սիրո Հայրենիք

հանուն արդարության հավերժ պայքարի
գաղափարը:

-Դուրս ես գալիս հնարավորություններիդ
սահմաններից, փորձում ես ամենաանհնարինը
հնարավորների մեջ: Մոռանում ես քեզ, ցավի ու
միայն հիշում, որ քո թիկունքում մի ամբողջ
ժողովորդ է, որն ուղակի ապրել է ուզում: Աղոթում
ես Աստծոն, որ ուժ տա՝ նրանց պաշտպանելու
համար:

-Մեռնեմ ձեզ, տղե՛րք ջան, ա՛յ թե սերունդ է
մեծանում, փա՛ռք մեր Աստծոն, որ տուն եք եկել, իսկ
մեր տղերքին, մեր հողերը դեռ հետ ենք բերելու:

Մի քանի րոպե չանցած՝ կանայք ճոխ սեղան էին
գցել՝ համեղ հայկական ուտեստներով, շրեղ
սպասքով, ըմպելիքներով:

Երբ բոլորը հավաքվել էին սեղանի շուրջ, տան
դուռը բացվեց.

-Տղե՛ս, -գոռալով ներս մտան Աքելի հայրն ու մայրը:

Մայրն ամուր գրկել էր որդուն ու բաց չէր թողնում:
Որդին, ում զոհված էին համարում, ողջ էր, իր
զրկում: Դա հրաշք էր, որի դեմ անզոր էր որևէցե
բացատրություն:

Լովիզա Բաբայան

Սեղանի շուրջ հավաքվել էին մարդիկ, ովքեր
կամա թե ակամա դարձել էին իրար համար
սրտակից, հարազատ: Մենյակը լցվել էր քաղցր
բերկրանքով: Այդտեղ գտնվողները վայելում էին
մեկը մյուսի ներկայությունը, անդադար չնորհակալ
լինում Աստծուն այդ մեծ նվերի համար: Բոլորը լոել
էին, երբ Կարենը դեմքի տխուր խառնվածքով ասաց.

-Գևորգն էլ գնաց, Աբե՛լ:

-Գևո՞րգը,- զարմացավ Աբելը:

-Հա՛, երբ իմացավ քո մահվան մասին, եկավ ինձ
մոտ, զրուցեցինք: Շատ վատ վիճակում էր, իրեն էր
մեղադրում, ամաչում էր:

-Իսկ իիմա որտե՞ղ է, լուր չունե՞ք:

-Զոհվել է, չի ենթարկվել նահանջ հրամանին ու
կովել է մինչև վերջին շունչը:

Աբելի հայացքը սառեց, ուղեղում վերարտադրվում
էին բոլոր հիշողությունները, մարմնով սարսուու էր
անցնում, հոգին անասելի ցավում էր՝ չցանկանալով
հավատալ լսածին:

-Մահն անխուսափելի է, երբ պայքարն անզիջում է,-
ասաց Կարենը՝ ձեռքը դնելով Աբելի ուսին:

Սիրո Հայրենիք

-Երանի թե նա էլ մեր կողքին լիներ,- ուտելիքը մի կողմ հրելով ու արցունքներն աչքերից սրբելով՝ ասաց Աբելը:

-Ավսոս, որ հրաշճները կրկնվելու հատկություն չունեն,- հուզվելով ասաց Աղելինան ու գնաց Կարենի կնոջ՝ Լիլիթի մոտ: Մի քանի բոպե անց վերադարձավ և ասաց:

-Կարե՛ն, Լիլիթին պետք է հիվանդանց տանել:

Կարենը տեղից վեր թռավ, վերցրեց Լիլիթին, ու գնացին հիվանդանց: Բոլորն անհամբեր սպասում էին:

Ժամեր անց ծնվեց Կարենի որդին՝ Գևորգը: Նրան Գևորգ անվանակոչեցին, որպեսզի քաջ լինի, ազնիվ ու անպարտ: Դառնա հայրենիքի արժանի զավակն ու հպարտությունը, որ պատմի մի հերոսի մասին, ում բոլորը պետք է ճանաչեն

Պատերազմը ստիպեց գնահատել կյանքի ամեն վայրկյանն ու հարազատ մարդկանց, ստիպեց, որ էլ ավելի ամուր կառչենք մեր հողից ու հասկանանք հայրենիք ունենալու կարևորությունն ու հայրենիքի համար վճարվող գինը: Այն ստիպեց մեզ, որ լցվենք վրեժի ծարավով ու պայքարենք հանուն վաղվա

Լովիզա Բաբայան

հայրենիքի: Եվ ու՞մ ենք սպասում, գործելու
լավագոյն պահը հիմա է: Մեզ հմուտ
դիվանագետներ են պետք, իրավագետներ ու
ճարտարապետներ, բժիշկներ ու մանկավարժներ:
Մեզ մեծ ուժ է պետք, գիտելիք է պետք: Ժամանակն
է ետ բերելու մեր փառքը, վերամիավորելու
Արցախը: Ժամանակն է, որ պանդոխտները
հայրենիք վերադառնան, որ ամեն մի ազգ մեզ
հարգի, պատվի: Ժամանակն է, որ կույր աշխարհն ի
վերջո բուժվի, իսկ հայր ապրի ու բարգավաճի:
Ժամանակն է, հայի ժամանակը...

Ես վերքեր ունեմ՝ դեռ չմշակված,
Ու վրեժ ունեմ՝ ի կատար չածված,
Հայրենիք ունեմ քար ու քանդ եղած,
Ես էլ սիրու չունեմ. ցավից եմ արբած:

Բայց չեմ դադարի գոռալ.
Հայրենիք՝ ք, զավակն եմ հավերժ, քո՝ վեհագույնիդ:
Եվ թող ծնկի գա թուրքը չարախինդ
Ազգիդ պայքարի անզիջում ոճից:

Մեր հուշ անցյալն ու երազ ապագան
Թող դառնան վկան մեր պրտի ցաման,
Ու ոտքի ելած հայր զորավոր
Թող որ ծածանի խաչվառ դարավոր:

Բովանդակություն

101 տարի անց	5
Հայրենի կտավ	10
Անկատար իղձեր	16
«Իմ քաջ զինվորին»	27
Վերջին ժպիտը	31
Իրական հերոսը	38
Սիրո հայրենիք	42

ԼՈՒԻԶԱ ԲԱԲԱՅԱՆ
LUIZA BABAYAN

ՍԻՐՈ ՀԱՅՐԵՆԻՔ

A HOMELAND OF LOVE

Չափսը՝ 60X84 1/16
Ծավալը՝ 8 պայմ. տպ. մամուլ
Տպաքանակը՝ 30
Գինը՝ պայմանագրային

«Տիր» հրատարակչություն ՍՊԸ
Երևան, Հ. Քաջազնունու փ., 14/10
Տպագրվել է «Տիր» հրատարակչության տպագրատանը
Հասցեն՝ Երևան, Ա. Միկոյանի փ., 2/2

